History of the Freemasons
of Armenian Origin

Ամփոփում

«ԾԱԳՈՒՄՈՎ ՀԱՅ ԱԶԱՏ ՈՐՄՆԱԴԻՐՆԵՐԻ՝ ՄԱՍՈՆՆԵՐԻ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Խուան Աուգուստո Ապաճեան (*)

Ներածություն.

Դեռ վաղնջական ժամանակներից Հայկական Լեռնաշխարհում, Կովկասում և ամբողջ Անատոլիայում, ծագել ու զարգացել են եղբայրություններ և նվիրյալների ամենատարբեր կազմակերպություններ՝ օրդեններ: Այս բոլոր «Եղբայրությունները», լինեին դրանք կրոնական, քաղաքական կամ հասարակական բնույթի, հարյուրավոր տարիների ընթացքում Փոքր Ասիայում առաջացրեցին գերիշխող մշակույթներ և ենթամշակույթներ: Այս երևույթների օրինակներն են այսպես կոչված Պավլիկյաններն ու Թոնդրակյանները[1], որոնք հետևում էին մանիքեականին շատ մոտ

1. Այս եղբայրությունների մասին ավելի խոր տեղեկությունների համար տես. Dadoyan, Seta B.: “The Fatimid Armenians: cultural and political interaction in the Near East”. New York: Brill, 1997. Գլուխ 3 (Դադոյան, Սեդա Բ. «Ֆաթիմիդյան հայերը. մշակութային և քաղաքական փոխգործակցությունը Մերձավոր Արևելքում», Նյու Յորք. Բրիլ

քրիստոնեական ուսմունքին; Տաճարի Ասպետները՝ Տամպլիերները, Հիվանդախնամները; Տեֆտոնական օրդենը, որոնք բոլորն էլ կարևոր դեր են խաղացել Կիլիկիայի Հայկական թագավորության[2] գոյության ժամանակահատվածում; Արևորդիք[3]՝ 13-րդ դարի հերետիկ նեո – հեթանոսությունը, ինչպես նաև խիստ վիճելի Հաշաշիններն ու ուրիշներ: Սրանք բոլորը ծագել ու զարգացել են Պատմական Հայաստանի ընդարձակ տարածքներում: Այս կազմակերպություններից շատերն աղանդներ են համարվել, քանի որ ընդունված չեն եղել իրենց ժամանակի օրինական կառավարողների կողմից: Պատահական չէ, որ այս անօրինական խմբերը սովորաբար կապել են աշխարհակալական միտումների, դավադրությունների ու գաղտնի, խորհրդավոր պատմությունների հետ: Սակայն պետք չէ շփոթել այս խմբերը, եղբայրություններն ու օրդենները, ժամանակակից Կանոնակարգված (օրինական) Ֆրանկմասոնության[4] հետ, քանզի Ազատ Որմնադիրների Միությունը՝ Մասոնականությունը դա համաշարհային եղբայրություն է՝ իր գործունեության տարածք հանդիսացող յուրաքանչյուր երկրի ժողովրդավարական կառավարության կողմից ճանաչված ու հաստատված իրավական անձի կարգավիճակով:

Պատմական Հայաստանի տարածքում գործնական որմնադրությունն, այսինքն՝ **զուտ ճարտարապետական որմնադրությունը,** շինարարությունը, ծնունդ է տվել արհեստավոր

հրատարակչություն, 1997 թ.):

2. Կիլիկիայի Հայկական Թագավորության ու Տաճարական Ասպետների փոխհարաբերությունների մասին կարող եք կարդալ.“Mutafian, Claude., “Le Royaume Armnnien de Cilicie, XIIe-XIVe sincle”. CNRS lDITIONS, Paris. 1993,2001. (Մութաֆյանյան Կլոդ. «Կիլիկիայի Հայկական Թագավորությունը XII-XIV դդ. CNRS հրատարակչություն, Փարիզ, 1993, 2001 թ.)

3. Դադոյան, էջ 72 -75;

4. Կանոնակարգված, օրինական Ֆրանկամսոնություն ասելով ի նկատի ունենք այն գործընթացը, երբ յուրաքանչյուր Մեծ Օթյակ կամ Մասոնական Մեծ Իրավասության տակ գտնվող կազմակերպությունն ընդունվում է և ճանաչվում որպես այդպիսին՝ գործելով ըստ օրդենների հնագույն ուղեցույցների: (Ծանոթ. հեղինակի):

Վարպետ քարագործի ստորագրությունը, Զվարթնոց, Հայաստան, VII դ.

վարպետների, հրաշագործ քարտաշների, տաճարաշինության վարպետների, որոնք մեծ համբավ են վաստակել Միջնադարում: Քարագործության մեջ պատմական այնպիսի անունները, ինչպիսիք էին, շատ ուրիշների թվում, Տրդատը, Մոմիկը, Սարգիսն ու Մանվելը հարյուրավոր պատմական հուշարձանների, եկեղեցիների,

խաչքարերի վրա, որոնք մինչ այժմ զարդարում են Հայկական Հանրապետության ու հարևան երկրների հողը, իրենց հետքերն են թողել ստորագրությունների, նշանների, գաղտնի խորհրդանշանների միջոցով[5]: Նույն ձևով, ինչ որ այժմյան մտքի կառուցման, փիլիսոփա-մասոններն են հավաքվում մտավոր-կառուցողական աշխատանոցներում (Մասոնական Օթյակներ), այն օրերի շինարար բանվորներն ու քարագործներն էլ հավաքվում էին Շինարարների Օթյակներում, իրագործելու համար իրենց Մեծ Աշխատանքը: «**Մեծ Աշխատանք**» էին կոչում այն Խորհրդանիշը, տվյալ դեպքում՝ ճարտարապետական, որը կայանում էր ոչ միայն շենքը, կառույցը վեր խոյացնելու մեջ, այլև արդեն «**Նոր՝ Մտքի, Ժամանակաշրջանը**» սկսելու: Պատահական չէ, որ Հայ Առաքելական Եկեղեցու հայրը՝ Գրիգոր Լուսավորիչը եղել է այն «Մեծ Ճարտարապետը», որ նախագծել է Մայր Էջմիածնի գլխավոր Տաճարը՝ ամբողջ ժողովրդի պաշտոնական կրոնի Կենտրոնական Տաճարը:

Ֆրանկմասոնականությունը, որպես առաջադիմությունը խթանող շարժում, գալիս է արևմտյան մշակույթից: Այն բնութագրվում է որպես նվիրյալների առաջադիմական, մարդասիրական կազմակերպություն, որ ստեղծվել է Անգլիայում, 18-րդ դարում, չնայած, որ փիլիսոփայական արմատները գնում են դեպի հեռավոր անցյալի խորքերը:

Իր երկրի աշխարհագրական դիրքի շնորհիվ, որ կարելի է մի բառով կոչել «Խաչմերուկ», հայ ժողովուրդն իր հազարամյակներով չափվող պատմության ընթացքում մշտական փոխներգործության մեջ է եղել արևմտյան աշխարհի, նրա առաջադիմական գաղափարների ու լուսավորչականության հետ: Այս իսկ պատճառով հայկական ծագմամբ ֆրանկմասոնության պատմությունը

5. Բարխուդարյան, Ս. «Միջնադարյան Հայ ճարտարապետներն ու Քարագործ Վարպետները», Երևան, Հայկական ՍՍՌ, ԳԱ Հրատարակչություն, 1963 թ. (մասնավորապես գլուխ 5-րդ):

պետք է դիտարկել տարբեր կետերից: Իրականում Հայկական Մասոնականության՝ Ազատ Որմնադրության պատմությունը, դա «Ճանաչված պատմությունն է Նոր ու Նորագույն ժամանակների և Հայ ժողովրդի պատմության»: Բոլոր այն պատմական պահերը, երբ հայ ժողովուրդը մտավոր, հասարակական, քաղաքական և տնտեսական զարթոնք է ապրել, իրենց հետ բերել են այս ծագումով եղբայրներից կազմված առաջին օթյակների առաջացումը: 1717 թվականին Անգլիայում Մեծ Օթյակի կազմավորման ու զարգացման ժամանակաշրջանից ի վեր, երբ առաջացավ այսպես կոչված «տեսական», «մտավոր» ֆրանկմասոնականությունն, ի տարբերություն «գործնականի», մինչև 18-րդ դարի վերջ, 19-րդ դարի սկիզբ, կարելի է ծագումով հայ «Եղբայրների» մեջ նկատել, ճանաչել մասոնականության առաջին նշանները:

Ի վերջո, «տեսական» կամ «մտավոր» մասոնականության ծագումից գրեթե 3 դար հետո, պատմության մեջ առաջին անգամ Հայ ազգն ունի իր ազատ ու անկախ Մեծ Օթյակը (2002):

Հեռավոր արմատները. 18-րդ դար:

Հայ Ազատ Որմնադիրների՝ Մասոնների, առաջին հետքերը տեսանելի են Պարսկաստանում (Նոր Ջուլֆա) ծնված հայ վաճառականների ու Հնդկաստանում հաստատված անգլիական առևտրական ընկերությունների փոխգործակցության մեջ: Այս ժամանակաշրջանում է, որ Հովսեփ Էմինը հոր հետ ճամփորդում էր Կալկաթա և սկսում «Հայաստանի Ազատագրման» իր առաքելությունը, այնպես, ինչպես տարիներ առաջ Իսրայել Օրին էր փորձում: Պարսկաստանում (Նոր Ջուլֆա) բնակվող հարյուրավոր հայեր առաջատար դիրք էին գրավում Հնդկաստանը Լոնդոնի հետ կապող առևտրական ցանցերում, որ անցնում էին, այսպես կոչված «Մետաքսի Ճանապարհով»: Անգլիական «Իստ Ինդիա Քոմափանի»-ն (East India Company) էր, որ Մադրաս (արդի Չենայ) բերեց անգլիական Ֆրանկմասոնականությունը 1730 թվականին:

Նշված ընկերությունում շատ վաճառական հայեր կային[6], որոնք աշխույժ առևտուր էն անում ամբողջ Եվրոպայում ու նաև բարձր դիրքի էին հասել Հնդկաստանի հասարակական շերտերում: Ազգությամբ հայ ակտիվ անդամի մասին առաջին տեղեկությանը հանդիպում ենք Էդինբուրգի «Քանընգէյթետ» օթյակի (Canongate Lodge) տղեկագրերում. «Չորս Մեծառու Վարպետներ կներկայացնեն Անգլիայի Միացյալ Մեծ Օթյակը հետևյալ տարածքներում. Միջին Արևելքի, Հալեպ, և Իրանի †»: Այս չորս Մեծառու Վարպտների մեջ նշվում է մի հայի անուն՝ Դր. Մանասե[7], որ Անգլիայի Գերագույն Մեծարգո Վարպետ Էրլ Ֆերրելի կողմից նշանակվել էր Տարածաշրջանային Գերագույն Մեծարգո Վարպետ «Արմենիայի» համար, 1762 -1764 թթ: Մինչև 1805 թվականը, այն տարին, երբվանից պաշտոնապես անհայտանում է Մանասեի անունը, այն խումբը, որ միացնում էր այս չորս Օթյակները, կոչվում էր «Ամբողջ Հայաստանն Արևելյան Հնդկաստանում»[8] (All Armenia in the East Indies): Եկել էր

6. Տես. Baladouni Vahn, Margaret Makepeace, East India Company. "Armenian merchants of the seventeenth and early eighteenth centuries: English East India Company sources". American Philosophical Society, 1998. Պալատունի Վահե, Մարգրիթ Մէյքփիս. Արևելահնդկական Ընկերություն. «17 –րդ և վաղ 18 –րս դարերի հայ առևտրականները. Անգլիական Իստ Ինդիա Քոմփանի-ի ակունքները», Ամերիկյան փիլիսոփայական Ընկերություն, 1998 թ.

7. Բերբերեան Ռուբէն. «Հայ Մասօնները «Սէր» Օթեակը Պոլսոյ մէջ», Հայրենիք, Պոսթրն. Մարտ –Յունիս 1937 թ. Ապրիլյան հրատ., էջ 128;

8. Տես. Gould, Robert Freke. "A Library of Freemasonry : comprising its history, antiquities, symbols, constitutions, customs, etc., and concordant orders of Royal Arch, Knights Templar, A. A. S. Rite, Mystic Shrine, with other important Masonic information of value to the fraternity derived from official and standard sources throughout the world from the earliest period to the present time", John C. Yorston Publishing Company. London. Philadelphia. Montreal. 1906. Տես. Գոուլդ Ռոբերտ Ֆրեկե «Ֆրանկմսոնական Գրադարան. ընդգրկում է նրա պատմությունը, հնությունները, խորհրդանիշները, սահմանադրությունները, սովորույթները և այլն, նաև Թագավորական Կամարի (Royal Arch Masonry) Տաճարի Ասպետների (Knights Templar կամ՝ Տամպլիերների(, A. A. S. Ծիսակարգի (A. A. S. Rite. Ancient and Accepted Scottish Rite - Հին, Ընդունված Շոտլանդական Ծիսակարգ: Ծանոթ. թարգմանչի), Առեղծվածային Տաճարի (Mystic Shrine), ինչպես նաև այլ արժեքավոր մասոնական տեղեկություններ՝ մինչև, ամբողջ աշխարհում, ամենավաղ ժամանակներից մինչև մեր օրերը, տարբեր պաշտոնական ու տիպական արմատներից

Բասրայից (Bussorah)՝ արդի Իրաք, և հաստատվել էր Կալկաթայում, Մանասեի մասին ավել տեղեկություններ չկան: ՄԻնչ այժմ Անգլիայի Մեծ Օթյակի հնադարաններում, ու տեղեկագրերում հանդիպում ենք Մանասեի անվանը:

19-րդ դար. «Արմենիա» թիվ 685 Օթյակը և նրան հաջորդող հայ Ազատ-Որմնադրության աճն Օսմանյան Կայսրությունում և աշխարհում:

Հնդկաստանում անգլիական մասոնականության հայտնվելու սկզբից հարյուր տարի անցավ, միչև որ Մադրասում հաստատվեց առաջին մասոնական օթյակը, կազմված հայազգի անդամներից: 1837 թվականին գաղութային Հնդկաստանում, Մադրաս քաղաքում հիմնադրվեց «**Արմենիա**» **թիվ 685 Օթյակը**՝ Անգլիայի Մեծ Օթյակի հովանավորության տակ: Օթյակը վաղանցիկ կյանք ունեցավ (1865թ.), լի թռիչքներով ու վայրէջքներով: Այն կապված էր քաղաքի հեղինակավոր ու ճանաչված վաճառական ընտանիքների հետ: «Արմենիա» թիվ 685 օթյակը գործում էր Մադրաս քաղաքի Արմենիա փողոցի (Armenia Street) վրա: Նշված Օթյակի մասնակի փակումից հետո՝ այն վերածնվում է 1848 թ. քաղաքի ազնվական ընտանիքներից մեկի անդամ, Մեծառու Վարպետ (Նախագահ) Անդրյու Սամի[9] (Andrew Sam, 1812 -1884), ղեկավարությամբ: Մասոնականության և Մադրասի հայ վաճառականության հետ կապված այս ընտանիքները, միաժամանակ սերտորեն կապված

ծագած եղբայրությունները», Ջոն Ս. Յորթսըն 1906 թ. էջ 125:

9. Տես Rev. Malden, C.H.: "A History of Freemasonry (Under the English Contitution) on the Coast of Coromandel together with histories of the Old Madras Lodges which were founded before the Union, together with Appendice and a Map". Madras: Addison, 1895. Pngina 94. (1848 թվականի վերջերում հաշվվում էր «Արմենիա» Օթյակի 15 անդամ: Տես Պատվարժան Մալդեն, Ս. Հ. «Կորոմանդել ափին գոյություն ունեցած մասոնականության պատմությունը (անգլիական Սահմանադրության ներքո(, Միությունից առաջ հիմնադրված Մադրասյան Հին Օթյակների պատմությունների, ինչպես նաև հավելվածի ու քարտեզի հետ միասին», Մադրաս. Ադդիսոն, 1895. Էջ 94:

Փոլ Չաթեր

էին նաև միմյանց հետ, քաղաքում հայ մշակույթի զարգացման հետ: Օրինակ. Մեծառու Վարպետ Անդրյու Սամի պապը՝ Տիար Հակոբ Շամիրն[10] առաջինն հայն էր, որ քաղաքում տպարան հիմնադրեց: Դրա կարևորությունն ընդգծվում է այն փաստով, որ այդ տպարանին ենք պարտական պատմության մեջ առաջին հայ պարբերականը համարվող «ԱԶԴԱՐԱՐԻ» ծնունդը: Օթյակը շարունակեց գործել մինչև թվականը և նրա անդամներից շատերը բարձր աստիճանների հասան շոտլանդական ծեսի ֆրանկմասոնության մեջ[11].

Մինչև այժմ Հնդկաստանի բոլոր մասերում կարելի է հայերի գերեզմաններ գտնել անշփոթելի մասոնական խորհրդանիշերով[12]:

Փոլ Չաթեր (Paul Chater)[13]

Վիկտորիանական ժամանակաշրջանի Հնդկաստանի ծագումով հայ վերջին կարևոր օղակը մասոնականության մեջ

10. Լրացուցիչ տեղեկությունների համար տես Հնդկաբնակ հայերի մասին կարևորագույն աշխատանքը. Jacob Seth, Mesrovb. "History of the Armenians in India from the earliest times to the present day", Luzac & co., London, 1897. (Զակոբ Սեթ, Մեսրոբ. «Հնդկաստանի Հայերի Պատմությունը՝ վաղնջական ժամանակներից մինչև այսօր», հրատարակչություն Luzac & co., Լոնդոն 1897.(:

11. Խոսքը գնում է 33 մակարդակից բաղկացած Ֆրանկմասոնության աստիճանների մասին: Օրինակ. Մադրասի Ռոսակրուսների 18-րդ աստիճանում էին հետևյալ հայերը. Վարդան Սեթ Սամը (Vartan Seth Sam) Եղիազար Սեթ Սամը (Eleazar Seth Sam), Փոլ Մելիտուսը (Paul Melitus) և Ստեփան Լազարը (Stepnn Lazar): Տես. Մալդեն Ս.Հ. , նշված գրքի էջ 120:

12. Ուշադրության արժանի է Լիզ Չաթերի (Liz Chater) աշխատությունը. «Հայկական Գերեզմանները, Գրություններն ու Հուշարձանները Հնդկաստանում, ԴԱԿԿԱ (DACCA, 1722-1977). Հրատարկված. Chater Genealogy Publishing & Blurb Inc, կողմից, 2011, Լոնդոն. Հատկապես 103 էջի լուսանկարները:

13. Տեղեկությունը քաղված է "Chater-Cosmo Transactions - Masonic Records of the Far East" (Չաթեր – Կոսմո գործառնություններ- Հեռավոր Արևելքի Մասոնական Տեղկագրեր) աշխատությունների շարքից:

հանդիսանում է Կաչիկ Փոլ Չաթերը **(Catchik Paul Chater)**, իսկական անունը՝ Խաչիկ Պողոս Աստվածատուր: Ծնվել է Կալկաթայում 1846 թվականին, եղել է հաջողակ ու հեղինակավոր անձնավորություն, որ իր բոլոր հնարավորությունները զարգացրել Կայսերական Հոնգ Կոնգում: Գրավել է տասնյակ կառավարական պաշտոններ ու Կալկաթայում ծերանոցներից մեկը մինչև այժմ կրում է նրա անունը: Հոնգ Կոնգում ևս փողոցներից մեկը կոչված է նրա անունով, նրա պատվին: Նա միշտ եղել է մի մարդ, որ իր ունեցվածքի մեծ մասը հատկացրել է մաղասիրական նպատակներին, որ մասոնականության հիմնասյունն են հանդիսանում: Բացի բրիտանական թագավորական տան կողմից նրան հանձնված «Սուրբ Միքայելի ու Սուրբ Գևորգի» շքանշաններից, Խաչիկը նաև **«Համառություն» (Perseverance) թիվ 1165 օթյակի Մեծառու Վարպետն էր, Անգլիայի ՄԻացյալ Մեծ Օթյակի Հոնգ Կոնգի և Չինաստանի Հարավային տարածաշրջանի Գերագույն Մեծարգո վարպետը (1881-1909), առաջին հայ մասոններից մեկը, որ հասել է Մասոնական բաձրագույն 33 –րդ աստիճանին: Այդքան էլ կարծես բավական չէր, մինչև այժմ Անգլիայի Միասնական Մեծ Օթյակի Հոնգ Կոնգի ու Հեռավոր Արևելքի տարածաշրջանի բաժանմունքը հովանավորվում է մի օթյակի կողմից, որը կոչվում է «Փոլ Չաթերի Օթյակ և Հաստատված Վապետներ» թիվ 5391:** Առանց կասկածի, եղել է կանոնակարգված Ֆրանկմասոնների աստիճանակարգում ամենաբարձր մակարդակի հասած հայազգի մասոններից մեկը:

Մասոնական զարթոնքն Օսմանյան Կայսրությունում.

«Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն»:

Այսպես էր ավարտվում յուրաքանչյուր տունը «**Սեր**»[14] **օթյակի** նվիրյալ հայ բանաստեղծի ամենագեղեցիկ ստեղծագործություններից մեկի, որը վերնագրված է «**Եղբայր եմք մեք**», ձոնված Օսմանյան մայրաքաղաքի նշված օթյակի իր հայ եղբայրներին (խոսքը Մ. Պեշիկթաշլյանի մասին է, վերնագիրը բերված է հեղինակի ուղղագրությամբ: Ծանոթ. թարգմանչի):

Այնպես է պատահել, որ 19-րդ դարի հայ Ազատ – Որմնադրության՝ Մասոնականության, կարևորագույն երևույթները կատարվել է Օսմանյան Կայսրությունում: Կոստանդնոպոլիս (արդի Ստամբուլ) և Զմյուրնիա (արդի Իզմիր) քաղաքները, որպես երկու հենասյուներ, հանդիսանում էին Օսմանյան Կայսրության Արևմտյան Հայաստան կոչվող տարածքում բնակվող հայերի տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային կենտրոնները: 19–րդ դարի երկրորդ կեսին Կայսրության խորհրդանշական այս քաղաքներում հայ ժողովրդի զարգացումը նպաստել է այն բանին, որ շատ երիտասարդներ, բարգավաճող վաճառականների, արդյունաբերողների ու մասնագետների ընտանիքների զավակներ, հնարավորություն են ունեցել սովորելու մեկնել Եվրոպա (Վենետիկ, Փարիզ, Բեռլին), վերադառնալով՝ լեցուն գաղափարներով ու սովորություններով, որ իշխում էին հին մայրցամաքում: Հայ ժողովրդի այս նույն առաջընթացն

14. «Սեր» Օթյակի վերաբերյալ նյութերի համար տե՛ս. «Պէրպէրեան Ռուպեն. «Հայ Մասօնները և
"Սէր" ՕթեակըՊոլսոյ Մէջ». Հայրենիք հրատ. Պոսթըն, Մարտ – Յունիս, 1937 թ.; Պէյլերեան Արթիւր. «Ազատ – Որմնադրութեան Մուտքը Օսմանեան Կայսրություն և Պոլսոյ Հայկական "Սէր" Օթեակը, ԺԹ դարուն» Պէյրութ, Հայկազեան Հայագիտական Հանդէս, ԻԱ հատոր, 2001 թ. և Պէյլէրեան, Արթիւր. «ԺԹ Դարու Հայկական "Սէր" Օթեակին Անդամ Ազատ- Որմնադիրներու Ընդհանուր Ցուցակ», Պէյրութ, Հայկազեան Հայագիտական Հանդէս, ԻԳ հատոր, 2003 թ. Ֆէնէրճեան, Արմենակ . «Ազատ-Որմնադրութիւնը Մօտաւոր Արեւելքի Հայութեան Մէջ», Կեանք Եւ Արուեստ, Ե տարի, Փարիզ; և «Ազատ –Որմնադրութիւնը Հայոց Մէջ», Հայրենիք հրատ. Պոսթըն, Հոկտեմբեր 1954, Դեկտեմբեր 1955:

Օսմանյան Կայսրության այս քաղաքներում հակադրվում էր այն ծանր իրականությանը, որում ապրում էին կայսրության ներքին գավառների քաղաքներն ու գյուղերը: Համեմատած կայսրությունում բնակվող ազգային այլ փոքրամասնությունների հետ, ներքին գավառներում բնակվող հայազգի քաղաքացիների վիճակն ավելի ծանր էր, նրանք տառապում էին իրենց քաղաքացիական, քաղաքական ու տնտեսական իրավունքների մշտական, անդադար ոտնահարումից: Զեյթունի ապստամբությունը եղավ այս իրադրության տրամաբանական շարունակությունը[15]: Կասկած չէր մնում, որ արդեն հասունանում էին հայ ազգի կազմակերպումն ու երկար երազած բարեփոխումները՝ 1863 թվականի, այսպես կոչված՝ «Ազգային Սահմանադրության»[16] միջոցով: Բարեփոխումների կողմնակիցները մտածում էին, որ դրանք հասարակական արմատական կարևոր փոփոխություններ կբերեն Ստամբուլի Պատրիարքարանի հայության, ամիրաներից[17] բաղկացած ուժեղ, պահպանողական շերտերի և ամենակարիքավոր քաղաքացիների համար: Հայ մտավորականները, վաճառականները և տարբեր ոլորտների մասնագետները հիմնավոր փոփոխությունների կարիք էին զգում կայսրության հայ հասարակության համար: Ժամանակն էր միավորելու հայերին, արդիականացնելով գաղափարները, հնարավորություն տալու համար հասնել աշխարհի այն ազգերին, որոնք ավելի վաղ էին հասել Ազատության ու Անկախության:

15. Տես. Պէյլէրեան, Արթիւր. «Ազատ-Որմնադրութեան Մուտքը Օսմանեան Կայսրութիւն և Պոլսոյ Հայկական “Սէր” Օթեակը ԺԹ դարուն», Պէյրութ, Հայկազեան Հայագիտական Հանդէս, ԻԱ հատոր, 2001 թ. էջ 156:

16. Այս գործընթացի մասին, որ սկսեց Միլդատ Փաշան (Midhat Pasha), Հաթ – Հումայունը (Hatt-ı Hمmayun) և այս փոփոխությունների հետ մասոնական շարժման ունեցած կապի մասին, տես. Բերբերեան Ռուբեն, մարտ ամսվա հրատարակություն, 1937 թ., էջ 78 և Պէյլէրեան Արթիւր, էջ 163:

17. Օսմանյան հայերի վերնախավը, որ ներկայացնում էր դրամատերերի և առևտրականների բարձր հասարակությունը, որ գերադասում էր հայկական պահպանողական և ոչ թե բարեփոխումներով հասարակություն: Ծանոթ. Հեղ.

Այս հասարակական – քաղաքական կտրվածքով, Մասոնական Մեծ Ուժերը, (կարող ենք կոչել դրանք Մեծ Օթյակները կամ Մեծ Արևելքեր)[18] նշված քաղաքներում նախատեսել էին կենտրոնացնել տարածաշրջանի արևմտականացման առաքելությունը և հնարավորին չափով Մասոնական Օթյակների հաստատումն ու բացումը: Իտալիայի Մեծ Արևելքը, Շոտլանդիայի Մեծ Օթյակը, Անգլիայի Միացյալ Մեծ Օթյակը և Ֆրանսիայի Մեծ Արևելքը ջանասիրաբար աշխատեցին կայսրության տարածքում Մասոնական Օթյակների տարածման համար[19]:

Օթյակների ծնունդը:

Մասոնական ցանկացած Օթյակի պատմության մեջ բնորոշ է, որ ըստ կանոնակարգի, օթյակի ստեղծման համար անհրաժեշտ է եղբայրության նվազագույն որոշակի թվով անդամների առկայությունը: Հայկական օթյակների դեպքում այս հարցը մշտապես առկա է[20]: Միանալուն և կազմակերպվելուն ուղղված ջանքերն ուսումնասիրման արժանի են: Տվյալ դեպքում ուշադրություններս կենտրոնացնենք մի մարդու վրա, իր կյանքը նվիրել է Համաշխարհային Մասոնականության ընդարձակմանն

18. Մեծ Օթյակ կամ Մեծ Արևելք կոչվում են մարմինները, որոնք ներկայացնում են այն երկրները, որոնց կցված են այդ Իրավասության Օթյակները: Օրինակ. Անգլիայի Միացյալ Մեծ Օթյակը կամ Իտալիայի Մեծ Արևելքը (Gran Oriente D'Italia) Ծանոթ. Հեղ.

19. Այս հարցը պարզորոշ արծարծվում է Dumont, Paul: "Freemasonry in Turkey: a by-product of Western penetration," European Review, Cambridge University Press, vol. 13(03), pages 481-493, July (Դյումոն, Փոլ. «Ֆրանկմասոնությունը Թուրքիայում. Արևմտյան ներթափանցման կողմնակի արդյունք», Եվրոպական Ամփոփիչ Տեղեկագիր, Քեմբրիջի Համալսարանի Տպարան, հատոր 13(03), էջ 481-493, Հուլիս):

20. Հայ Մասոնական Օթյակների ստեղծման ուսումնասիրությունների ընթացքում նկատվում է, որ միշտ հենց հայերն իրենք պետք է փնտրեին ու գտնեին անդամներ իրենցից և ներկայանալուց հետո՝ ստանալ մասոնական ընդհանուր նախագիծ: Ծանոթ. հեղ.

ու հայ ազգի լուսավորմանը. **Սերովբե Ազնավուր**[21]**:** Նա այն անձնավորությունն է, որ սկսեց և շարժման մեջ դրեց Հայ Մասոնականության մեանիզմն Օսմանյան Կայսրությունում: Բնածին նախաձեռնող, հմուտ առևտրական, բարձր մակարդակներում կապեր ունեցող, 1850 թվականից սկսած մշտապես ճամփորդում է դեպի Լոնդոն և Մանչեստեր: Նրա որդին՝ Հովսեփ Ազնավուրը, Օսմանյան Կայսրության ժամանակի ամենահայտնի ճարտարապետներից մեկը, ծնվու թվականին, երբ նրա հայրը՝ Սերովբեն, շարունակում էր ճամփորդել՝ իրականացնելու համար ամենատարբեր առևտրական ծրագրեր[22]: Այդ տարիների ընթացքում, Սերովբե Ազնավուրն Անգլիայում «**Ջորդան» թիվ 201**[23] **(Jordan" Ոե 201)** Օթյակի նվիրյալ է, լինելով Մասոնականության լույսը[24] ճանաչած ստամբուլահայերից առաջինը: Լոնդոնում ևս հասնում է այնտեղ, որ նրան նշանակում են Մասոնականությանը կից Մանչեստրի «Odd Fellows» կազմակերպության անդամների հետ

21. Եղել է հայ առաջադիմական թևի խորհրդանիշնրիվց մեկը, որ ցանկանում էր տեսնել Հայ Ազգային սահմանադրությունն Օսմանյան Կայսրությունում: Որպես Մասոնականության հավատարիմ ներկայացուցիչ, Սերովբե Ազնավուրը եղել է յոթ Օթյակների հիմնադիր - անդամներից մեկը: Անկասկած եղել է այն անձը, որ կարողացել է Համաշխարհային Մասոնականության խոսքը տարածել հայերի մեջ. Տես. Ֆեներջեան, Բերբերեան և Պէյլէրեան ծավալուն աշխատությունները:

22. The 1851 Great Exhibition in London established by the Armenian entrepreneurs Christopher (Hatchi) Oscanyan and Serovpe Aznavour from Istambul in view of the scalating Crimean War", en Nebahat Avcioglu "Turquerie and the Politics of Representation, 1728-1876". Ashgate Publishing Limites, London, 2011. («1851 թվականի ստամբուլցի հայ գործարար Քրիստափոր (Հաջի Օսկանյանի և Սերովբե Ազնավուրի կողմից կազմակերպված Լոնդոնի Մեծ Ցուցահանդեսը՝ կապված Ղրիմի հասունացող պատերազմի հետ», Նեբահատ Ավչիօղլու. «Թուրքությունը և ներկայացուցչական քաղաքականությունը 1728-1876 թթ» աշխատանքում. Հրատ. Ashgate Publishing Limited, Լոնդոն, 2011 թ, էջ 11:

23. Առաջին նվիրյալներից է նաև հայազգի երիտասարդ վաճառական Կոսմա Աղջիկյանը՝ Մանչեստրի "Integrity" թիվ168 Օթյակի անդամ: Տես. Պէյլէրեան Արթիւր, նշված աշխատություն, էջ 151: (Integrity բառն անգլերենում ունի մի քանի կիրառում. ըրպես ամբողջականություն, ազնվութուն և շիտակություն: Ծանոթ. թարգմ.)

24. «Մասոնականության Լույսը» - համապատասխան ծիսակատարությամբ Ֆրանկմասոնությանը միանալու, նվիրյալը դառնալու հոմանիշ է:

միասին 1862 թ. հունվարի 30–ին, Կոստանդնոպոլսի «Արևելյան» թատրոնում[25] իրականացնում է «**Հայկ – Օրիոն**» Օթյակի առաջին բաց միջոցառումը: Մասոնականությանը կից «Հայկ – Օրիոն» Օթյակը դարձավ այն նախատիպը, որի հիման վրա հետագայում ձևավորվեցին պատմության մեջ հայկական Մասոնականության մեջ հայտնի ամենալեգենդար Օթյակները: Ցավոք սրտի, «Odd Fellows» կազմակերպության «**Հայկ–Օրիոն**» **Օթյակի մասին պնդում են, թե մասոնական չի եղել** ու ներկայումս այն դատապարտվում է Ստամբուլի եկեղեցական ամենապահպանողական վերախավի շատ ներկայացուցիչների կողմից: Պատվելի Հովհաննես Չամուրջյանը՝ «Դերոյենց», Օսմանյան Կայսրության թարգման և գրաբարի կիրառման և ուրիշ շատ պահպանողական երևույթների ու սովորությունների մոլի կողմնակից[26], հանդես է գալիս Ազնավուրի դեմ և դատապարտում նրա հասարակական գործունեությունը: Դա Ազնավուրի գործունեությունը չի խափանում և իր պատմական բաց նամակում, տպագրված **ՄԱՍԻՍ** պարբերականում 1865 թվականի Մայիսի 1-ին, պատասխանում է պատվելի «Դերոյենցին» բարձր մակարդակով ու պարզ փաստարկներով[27]: Ծարունակելով հետազոտությունները, պարզելու համար, թե արդյոք Ստամբուլի հայ համայնքի կողմից դրականորեն է ընդունվել Հայկ – Օրիոն Օթյակը, Ազնավուրը զուգահեռաբար սկսում է Ստամբուլում գործող այլ Մեծ Օթյակներում գործող այլ հայ եղբայրների որոնումները:

Այդ ընթացքում, միևնույն ժամանակ, Զմյուռնիայում նոր թափ էր ստացել նոր Ազատ Որմնադրական Օթյակի ստեղծումը: Զմյուռնիան ավելի բաց ու ազատ քաղաք էր նման տիպի կազմակերպությունների հիմնադրման համար: Սուլթանի աչքից

25. Տես. Ֆէնէրճեան, Արմենակ, Ազատ Որմնադրությունը Հայոց Մէջ, հոկտեմբեր ամիս, 1954, էջ 94

26. Տվյալ դարի հայտնի անձանցից շատերը նկարագրված են. Թոլոլեան Մինաս. «Դար մը Գրականութիւն» հատոր Ա. 1850 – 1920, Գրախանութ Ապրիլ, ԱՄՆ, 1977թ. էջ 105:

27. Տես. Ֆէնէրճեան. Ա, դեկտեմբերի հրատարակություն, 1954 թ. , էջ 92:

հարյուրավոր կիլոմետրեր հեռու, ընդարձակ նավահանգիստ լինելը այլ՝ ավելի լայն դարպաս էր բաց անում դեպի արևմուտք: Զմյուռնիայում Անգլիայի Միացյալ Մեծ Օթյակն արդեն հիմնադրել էր մի քանի օթյակներ[28], որոնցից մեկը՝ «Հոմերոս» (Homer) Օթյակը, թիվ 806, մեծ կարևորություն ունի այս պատմության մեջ: Այս անգլիախոս Օթյակում, տարիներ առաջ, Ազնավուրը եղել է 2-րդ Դռնապան[29], բացի այդ, «**Հոմերոս»(Homer) թիվ 806** օթյակը շատ հայազգի նվիրյալների օրրան է հանդիսացել: Այս նվիրյալներն է, որ դրել են **Օսմանյան Կայսրությունում Առաջին Հայկական Օթյակի հիմնաքարը:** 1864 թվականի Հունիսի 5 – ին դրվում են հենասյուներն[30] ու ստեղծվում է «**Մեծն Տիգրան» թիվ 1014 Օթյակը**, Անգլիայի Միացյալ Մեծ Օթյակի հովանավորությամբ: Հիմնադարումից հետո, առաջին ժողովներից մեկի ժամանակ, տեղի ունեցավ պատմական մի իրադրություն. Որպես Անգլիայի Միացյալ Մեծ օթյակի Գերագույն Մեծարգո Վարպետ կատարած իր ճամփորդություններից մեկի ժամանակ, Զմյուռնիայում էր գտնվում Նորին Գերազանցություն, այն ժամանակ՝ Գալիայի Արքայազն, Էդուարդ VII-ը: Նա ներկա է գտնվում Ժողովներից մեկին և հավուր պատշաճի հատուկ ընդունելության արժանանում «Մեծն Տիգրան» -ի կողմից, որը նրան է հանձնում ղեկավարման Մուրճը ՝ համաձայն Ազատ Որմնադրության մեջ, որպես հարգանքի նշան գոյություն ունեցող, պատվավոր հյուրերի ընդունելու ծիսակարգի: Նորին Գերազանցությունը, Մուրճը Մեծառու Վարպետին վերադարձնելիս հայտատարում է. «... **հպարտ եմ օծել հայախոս մի օթյակ,**

28. Ջոն Լէյնի (John Lane) կատալոգում ընդգրկված են. «Տիգրան» Օթյակը, թիվ 1014 (Մեծն Տիգրան); Հոմերոս (Homer) Օթյակը, թիվ 806; «Հաղթանակ» (La Victoire) օթյակը, թիվ 896; «Սիոն» Օթյակը, թիվ 1340; Սբ. Գևորգ (St. George's) Օթյակը, թիվ 1015; Սբ. Հովհանու գ (St. John's) Օթյակը, թիվ 952, որոնք բոլորն էլ գործում էին Զմյուռնիայի հարթավայրում: Ջոն Լէյն, Մասոնական տեղեկագրեր (Lane's Masonic Records 1717-1894.)

29. Երկրորդ Դռնապանը ղեկավար պաշտոն է, որի պարտականությունների մեջ է մտնում նորընծա նվիրյալների հրահանգավորումը: Տես. Ազնավուրի գործունեությունը, Ֆէնէրճեանի պարբերականի 1955 թ. Հունվարի համարը, էջ 79:

30. «Հենասյուները» բարձրացնել կամ «Ներդնել» Օթյակը, նշանակում է օթյակի հիմնադում և գործունեության սկիզբ: Ծանոթ. Հեղ.

որ կրում է ձեր պատմական Թագավորի անունը»[31]: «Մեծն Տիգրան» թիվ 1014 օթյակը եղել է Զմյուռնիայում մշակութային, տնտեսական և հասարակական վերածննդի հավատարիմ մունետիկը: Այս օթյակի շարքերը ստվարացնող շատերի թվում[32] աչքի են ընկնում **Գրիգոր Չիլինկիրեանի, Մեսրոբ Նուպարեանի և Մաթևոս Մամուրեանի** լուսավոր անունները: Նրանք բոլորը կապված էին լրագրության, թարգմանության ու արևմտահայ գրա արդակը, որին հասել էր մշակույթը Զմյուռնիայում 1860 - 1880 թվականներին: Այնպկանության զարգացման հետ[33]: **Մասնավորապես Մամուրեանը փայլեց հայ պատմության մեջ ներմուծած իր նոր գաղափարներով, որոնք արտահայտում էր «Արևելեան Մամուլ» պարբերականում: «Մեծն Տիգրան» թիվ 1014 օթյակը** ցույց տվեց այն բարձր մակես ինչպես Ստամբուլի «Սեր» օթյակը, եկուսն էլ դադարեցին իրենց գոյությունը քաղաքական իրադրության պատճառով:

1865 թվականի վերջերին Սերովբե Ազնավուրն արդեն հավաքագրել էր բոլոր նրանց, ովքեր Ստամբուլում հիմնելու էին «Սեր» օթյակը: Երկար բանավեճերից հետո, թե որ Մեծ Օթյակն էր հովանավորելու Ազատ Որմնադիրների այս նոր Արհեստանոցը, անդամները որոշում են օծվել Ֆրանսիայի Մեծ Արևելքի Օթյակի կողմից, որ մինչ այդ արդեն Համաշխարհային Ազատ Որմնադրության[34] հին ծիսակարգով կանոնակարգված կազմակերպություն էր: Ֆրանսամետ անդամների մեծամասնությունը դիմում է Ազնավուրին, քանզի Ազնավուրը կարող էր կապ ունենալ

31. Այս պահի նկարագրությունը կարելի է կարդալ Ֆէնէրճեանի 1955 թ. Հունվարի համարում, էջ 81:

32. Պէյլէրեքնը նշում է 102, իսկ Ֆէնէրճեանը՝ հիշատակում է այդ օթյակի 118 պատմական անդամների: Ծանոթ. Հեղ.

33. Տես. Թոլոլեան. Մինաս. արդեն նշված աշխատանքի 133 և 169 էջերը:

34. Ծիսակարգ կամ ՀԻՆ Ուղեցույց կոչվում են այն հիմնական կանոնները, որնք հաստատվել են Անգլոսաքս Ֆրանկմասոնության կողմից, կազմակերպության էությունը, կարգն ու իրավասությունը պահպանելու համար:

Լուի Ամիաբլի (Louis Amiable)՝ Կայսրությունում ֆրանսիական ներկայացուցչի հետ, որպեսզի հայտնի այս որոշման մասին: Ազնավուրը, անգլիական ավանդական մասոնականության ներքո ծնված անդամ լինելով՝ համաձայնվում է լինել ֆրանսիական հովանավորության տակ, սակայն պահանջում է, որ ծեսերը կատարվեն անգլո- շոտլանդական կանոնակարգի համաձայն: **1866 թ Փետրվարի 22** –ին, հավաքվում են Ստամբուլի Բերա թաղամասում **հիմնադրելու համար «Սեր» օթյակը:** Սերովբե Ազնավուրը նշանակվեում է Օթյակի առաջին Մեծառու Վարպետ: Ինչպես «Մեծն Տիգրան» օթյակը, «Սեր» օթյակը ևս ամբողջովին հայախոս օթյակ է: Նրա ծեսերը ձևավորվել ու թարգմանված են եղել հայերեն, որպեսզի կատարվեն ճշտորեն, այնպես ինչպես նախատեսված է Ազատ Որմնադրության ավանդություններով: «Սեր» օթյակի երեսնամյա քրտնաջան աշխատանքի ընթացքում Ստամբուլը մտավոր ու քաղաքական մեծ առաջընթաց է ապրում, մի իսկական ՁԱՐԹՈՆՔ: Հասարակական – տնտեսական, քաղաքական շարժման մթնոլորտում կազմավորվում են Օթյակի անդամները: «Սերը» խիստ խորհրդանշական օթյակ է եղել և ուսումնասիրվել է շատ հայ պատմաբանների կողմից: Այս ուսումնսիրությունների և առկա փաստաթղթերի միջոցով կարողացել են պարզել «Սեր» Օթյակի 168 (հարյուր վաթսուն ութ) անդամների ինքնությունը[35]: Այս անդամներից շատերը եղել են Հայոց Պատմության կարկառուն դեմքեր: Նրանց թվում աչքի են ընկնում **Դր. Նահապետ Ռուսիգնանը**[36]՝ «Կիլիկիա» հիմնի հեղինակը, Հայ Ազգային Սահմանադրրության հիմնական գաղափարների հեղինակ Սրապիոն Հեքիմյանը, Ստամբուլում Հայ

35. Տես. Մասնավորապես – Պէյլէրեան Արթիւր. ԺԹ դարու Հայկական «Սեր» Օթեակի Անդամ Ազատ – Որմնադիրներու Ընդհանուր Ցուցակ», Պէյրութ, Հայկազեան Հայագիտական Հանդէս, ԻԳ հատոր, 2003:

36. «Սեր» ազատ- որմնադիրների օթյակի անդամների գերազանց բնութագրել են Բերբերյան Ռուբենը և, հատկապես Ռուսիգնանի մասին գրել է Մինաս Թոլոլեանը, արդեն նշված աշխատանքի 118 էջում:

թատրոնի հիմնադիրներից մեկը՝ **Մկրտիչ Պեշիկթաշլյանը**[37]՝ հայ գրականության կարևորագույն դեմքերից մեկը: Բախտորոշ էր նաև քաղաքական կարևոր գործունեությամբ զբաղված հրատարակիչներիէ **Հարություն Սվաճյանի և Կարապետ Յութուջյանի** մասնակցությունը, որոնք հանձն էին առել, Զեյթունի Ապստամբությունից հետո, խմբագրել Հայ Ազգային Սահմանադրությունը, «ՄԵՂՈՒ» և «ՄԱՍԻՍ» պարբերականների իրենց խմբագրականներում գաղափարներ ու մոդելներ առաջարկել հայ ժողովրդի ազատագրման ու առաջընթացի համար: Կատարված աշխատանքների ցանկն, իրոք, անվերջանալի է: հարկ է նշել նաև մեծ գործարարներին, դրամատների տերերին և Օսմանյան Կայսրության բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք եղել են «Սեր» Օթյակի անդամներ: Այդպիսիք էին **Թոքաթլյան եղբայրները**[38] և ոչ պակաս հայտնի **Գաբրիել Նորատունկյանը**՝

37. Պեշիկթաշլյանը եղել է գրաբարից աշխարհաբարին անցման ընթաքն արագացնող առաջատարերից մեկը: Եղել է, իր «եղբոր»՝ Ս. Հեքիմյանի հետ միասին, հայ թատրոնի հիմնադիրներից մեկը՝ թատերագրությունների վերածելով հայ գրականության շատ գործեր և ունի նաև 60 –ից ավելի բանաստեղծություններ նվիրված հայրենիքին, եղբայրությանը, ինչպես նաև սիրոն ու բնությանը: Հնարավորությունէ ունեցել լուսավորչական գործունեություն ծավալել կոնստանդնոոպոլսի հայ վաճառականների շրջանում, հայերեն սովորեցնելով այն ընտանիքներում, որոնք օտարախոս էին: Հմտություն է ունեցել փոխհամագործակցել այսպես կոչված «էմիր»-ների՝ բարեգործների դասի հետ: Այստեղ էր, որ կարողացել է մասամբ իրականացնել իր ազնիվ մարդասիրական գաղափարները, ստեղծել Համազգեաց ընկերությունը: Այս ընկերության նպատակն էր դպրոցներ հիմնադրել Օսմանյան Կայսրության բոլոր այն գյուղական հեռավոր շրջաններում, որտեղ հայերը հնարավորություն չունեին պահպանելու իրենց լեզուն ու մշակույթը: Ծրագիրն ուղղված էր գրքրի ու դպրոցական նյութերի տրամադրմամբ օժանդակել հայ ոգու ամրապնդմանը կայսրության բոլոր անկյուններում, որտեղ, պահի քաղաքական իրադրության պատճառով, հայերն ավելի ճնշված էին ու զրկանք էին կրում նույնիսկ սեփական մշակույթի առումով և, որպես հետևանք՝ նաև ինքնության: Ռուբեն Բերբերյանի հոդվածների վերջին հրատարակության պարունակած տեղեկութուններ միջոցով կարելի է ծանոթանալ բանաստեղծ Ignica Պեշիկթաշլյանի օթյակին անդամագրվելու արարողությանն ու այն տխրությանը, որ ապրում էր «Սեր» օթյակը նրա վաղաժամ մահվան կապակցությամբ: (Բերբերյան, Ռ. Հունիս, 1937). Ծանոթ. Հեղ.

38. Թոքաթլյան եղբայրների սեփականությունը հանդիսացող հյուրանոցներն այնքան հայտնի էին, որ դրանցից մեկը գործողությունների թատերաբեմ և գլուխներից մեկի վերնագիր է ընտրվել հռչակավոր գրող Ագատա Քրիստիի «Սպանություն Արևելյան

«Սեր» Օթյակի Մեծառու Վարպետներից մեկի ազգականը[39], Օսմանյան Կայսրության Առևտրի Նախարար (1908) և Արտաքին Գործոց Նախարար 1912 – 1913թթ.

Անկումը.

Ցավոք սրտի, «Սեր» Օթյակը ստիպված էր պայքարել պատմական երկու հիմնախնդիրների դեմ, որ միացել էին նույն իրադրության բերումով: «Սեր» օթյակի հիմնադրումից որոշ ժամանակ անց Ֆրանսայի Մեծ Արևելք Օթյակը որոշում է իր Սահմանադրությունից հանել հավատամքը «Տիեզերքի Մեծ Ճարտարապետի» և «Հոգու Անմահության» հանդեպ, իր շարքերն ընդունելով հարյուրավոր աթեիստների: Նաև առաջարկում է քաղաքական ու կրոնական թեմաների մեջ ավելի ներգրավված Ազատ Որմնադրություն: Մինչ օրս, չնայած **Ֆրանսիայի Մեծ Արևելքը** հանդիսանում է մասոնական հնագույն օթյակներից մեկը[40], հարաբերությունները մյուս Մեծ Օթյակների հետ ընդհատված են, կապված այն բանի հետ, որ իր պատմական որոշմամբ այն վեր է ածվել **Անկանոն Մասոնական Օթյակի**, որ հեռացել է Ավանդական Ֆրանկմասոնական ուղուց: Մեկ անգամ ևս, Ֆրանսիայի Մեծ Արևելքի Մեծարգո Վարպետին հասցեագրված պատմական ուղերձում, թվագրված 1867 թ. Հունիսի 30-ով, Սերովբե Ազնավուրը զգուշացնում է: «**...Եթե որևէ ժամանակ ձեր Սահմանադրությունից հանեք «Տիեզերական Ճարտարապետի և Հոգու անմահությանը» վերաբերվող հիմնական սկզբունքները, կկորցնեք ողջ «Սեր» Օթյակն իր ամբողջությամբ»:** ...Այսպիսով, «Սեր» Օթյակը կարողացավ պահել իր գործունեությունը կապված

Ճեպընթացում» վիպակի համար: Ծանոթ. հեղ.

39. Հարություն Նորատունկյանը եղել է «Սեր» օթյակի Մեծառու Վարպետը (Նախագահ) 1876 – 1885 թթ.

40. Ներկայումս Ֆրանսիայի Մեծ Արևելքը ակտիվություն է հանդես բերում Հայաստանի մայրաքաղաք Երևանում իր օթյակները հիմնադրելու համար:

Գերագույն Գոյի, որ, ինչ էլ լինի նրա էությունը[41], կոչվում է «Տիեզերքի Մեծ Ճարտարապետ»: Կարողացան խուսափել, որ խիստ կրոնամոլության տարիներին եղբայրներից շատերը լքեն օթյակը: Հենց այդ ֆրանսիական օթյակի անդամներից մեկը և Օսմանյան Կայսրությունում նրա մեծագույն ներկայացուցիչը՝ Լուի Ամիաբլեն (Louise Amiable), վերջ է դնում օթյակին, երբ սկսվում է «համիդիեյի» ժամանակաշրջանը: 19-րդ դարի վերջին տասնամյակից սկսած Սուլթան Աբդուլ Համիդը[42] սկսում է խիստ տարաձայնություններ ունենալ հայ քաղաքական շրջանակների հետ, որոնք սատարում էին Զեյթունի երկրորդ Հեղափոխությունը և բացահայտորեն ցույց էին տալիս իրենց անհամաձայնությունը Սան Ստեֆանոյի և դրան հաջորդած «Բեռլինի Կոնֆերանսի ու Համաձայնագրի» հարցում: Այս դեպքերը սկսում են խիստ անհանգստացնել Լուի Ամիաբլեին, որը գրություն է ուղարկում կենտրոն, խորհուրդ տալով գոցել «Սեր» -ը, զղջալով, որ արտոնություն են տվել հայախոս մի օթյակի, որ այն դարձնում էր շատ «փակ»[43]:

1890-ականների սկզբին, ինչպես «Սերը» Ստամբուլում, այնպես էլ «Մեծն Տիգրանը» Զմյուռնիայում, դադարեցնում են իրենց գործունեությունն ու լուծարվում:

Սակայն թողած ժառանգությունն ակնհայտ էր: Ինչպես պահպանողական «Դերոյենցին» ուղղած «Մասիս» պարբերականում հրապարակված իր պատմական բաց նամակում նշում է Ազնավուրը. «Դարդեն Ազատ Որմնադիրների

41. Սկված լինելով որպես քրիստոնյաների կողմից ծնունդ տված շարժում, Ֆրանկմասոնությունն իր շարքերում ընդունեց ամենատարբեր հավատքի տեր անձանց:

42. Ֆրանկմասոնության հետ նրա կապի վերաբերյալ տես. Koloğlu, Organ: “Abdulhamid ve Masonlar”. Istambul: Pozitif Yayınları, 2004. (Քոլողլու, Օրղան. «Աբդլհամիդն ու Մասոնները», Ստամբուլ, Հրատ. Pozitif Yayınları, 2004թ.):

43. «Դսխալ էր նման մի օթյակի հիմնադրումը Դ» այս բառերն է օգտագործել Լուի Ամիաբլեն իր ուղերձում վերջնականապես փակելով «Սեր» օթյակը: Տես. Հատկապես Պէյլէրեան Արթիւր, նշված աշխատանքի էջ 172:

«Եփրատ» Թիւ 1078 Օթյակ

արհեստանոցներ կան մայրաքաղաքում որտեղ բնակվում եմ, Զմյուռնիայում, Սալոնիկում, Ալեքսանդրայում և Կահիրեում, Հայ Ազատ Որմնադիրներն արդեն գործում են†»[44]: Նշված տարիների ընթացքում ստեղծված օթյակների շարում նշվում է «**Արմենակ» Օթյակը (1872)**[45], որ գործում էր Զմյուռնիայում և ստեղծված էր Իտալիայի Մեծ Արևելքի (Grande Oriente D'Italia) կողմից՝ նշված քաղաքի հայերին միավորելու նպատակով: Իտալական Մասոնական այս նույն զորեղ օթյակը ստեղծում է նաև «**Արարատ» կոչվող Օթյակը Կահիրեում:** «Սեր» Օթյակն այնքան մեխ կարևորություն է ունեցել, որ Եգիպտոսում գործող «Արարատ» Օթյակը նրանց է դիմե պաշտոնապես ծեսերի ու արարողակարգերի համար, իրենց Ազատ - Որմնադրական գործողությունները ճիշտ կատարելու համար[46]: Թողած պատմական ժառանգությունը, որ պատիվ է բերում հայազգի Ազատ Որմնադիրներին, ստեղծվել է այն մասոնական աշխատանքի արդյունքում, որ իրականացրել է Մամուրեանը «**Ազատասեր Դեմքեր**» վենագրով[47]: Այնտեղ աչքի է ընկնում հարգանքի տուրքը **Ազատասեր** անձի մահվան կապակցությամբ: Խոսքը գնում է հայ մեծերից մեկի՝ Միքայել Նալբանդյանի մասին, գրող, քաղաքական գործիչ, արդի Ազգային Հիմնի հեղինակ: Մամուրյանի աշխատության միջոցով կարելի է նկատել Մ. Նալբադյանի պատկանելիությունը Ազատ- Որմնադրական՝ Մասոնական որևէ օթյակի: Անխոնջ

44. Տես. Ֆէնէրճեան, Ա. 1954 թ. Դեկտեմբերի հրատարակություն, էջ 98:

45. Dumont և մասնավորապես Lacovella, Angelo: "Il Triangulo e la Mezzaluna", Instituto Italiano di Cultura Di Istanbul, 1997. Pnginas 37, 38 y 43. (Դումոն և, մասնավորապես՝ Լակովելիա, Անջելո «Եռանկյունին և Կիսալուսինը», Ստամբուլի Իտալական Մշակույթի Ինստիտուտ, 1997 թ. էջ 37, 38, 43):

46. Կես. Ֆէնէրճեան, վերը նշված աշխատանքի էջ 78; 1868 թ. Օգոստոսի 19 –ին «Արարատ» Օթյակը «Սեր» Օթյակին ուղարկեց պաշտոնական մի նամակ, որում խնդրում էր արարողակարգի թարգմանությունները:

47. Այս հիանալի աշխատանքը ներկայացված է Ռ. Պէպէրեանի պարբերականի 1937նթ. Ապրիլի համարում, սկսած 130 էջից: Ուշադրություն դարձրեք նաև այն սերտ հարաբերությունների վրա, որ գոյություն ուներ եղբայրների միջև, ինչպես օրինակ «եղբայր» Ջուզեպե Մացինին: Ծանոթ. հեղ.

ճանապարհորդ[48], Նալբանդյանը եղել է Ազատոնմանեցնում արևերի մենաբան ու տարախել է այդ գաղափարներն ընդհուպ մինչև իր մահը 1866 թվականին, Մոսկվայից հարյուրավոր կիլոմետրերի վրա գտնվող մի բանտում: Ծատերն էին նրան համեմատում սլավոնական հողի մեկ այլ մեծ բնակչի, մեկ այլ ազատ – որմնաիր եղբոր՝ **Ալեքսանդր Սեգեյեվիչ Պուշկինի** հետ, որ նույնպես կյանքից հեռացավ երիտասարդ տարիքում և պատմության մեջ ասես կրակով նշեց ռուս գրականության 19-րդ դարի ռոմանտիկ ժամանակաշրջանը:

Համաշխարհային հիմնավոր տարածումը.

Նորանոր ասիական շրջաններում Ֆրանկմասոնության ներմուծման նկատելի օրինակ է նաև Պարսկաստանում (Իրան) **Միրզա Մալքում Խանի**[49] և **Հովհաննես Մեսսեհյանի**[50] ծավալած գործունեությունը: Նրանցից առաջինը ծնվել է 1833 թվականին Նոր Ջուլֆայի բարեկեցիկ հայ վաճառական ընտանիքի հարկի ներքո: Նրա հորը՝ Միրզա Յակուբ Խանին համեմատում էին ոչ

48. «Սեր»Օթյակի հետ ունեցած նրա հարաբերությունների մասին տես. Ռ. Պէրպէրեան., Ապրիլ 1937;

49. Մալկում Խանի հակասություններով լեցուն կյանքի մասին տեղեկությունների համար տես. Algar, Hamid: “Mirza Malkum Khan: A biographical Study in Iranian Modernism. University of California, 1973.(Ալգար, Համիդ «Միրզա Մալքում Խան. Կենսագրական ուսումնասիրություն Իրանական մոդենիզմում» Կալիֆորնիայի Համալսարան, 1973 թ.):

50. Այս երկու անձանց Ֆրանկմասոնության և Իրանի արդիականացման հետ կապված գործունեության մասին տես. Kurkdjian, Vahan M.: “A history of Armenia”: New York, NY: Armenian General Benevolent Union of America. 1958. pagina 381 y Bournoutian, Georges. “A concise history of the Armenian people: (from ancient times to the present)”. Mazda Publishers. Pensilvannia, 2005.
Քիւրքչեան, Վահան Մ. «Հայաստանի Պատմությունը» Նյու Յորք, Ամերիկայի ՀԸԲՄ, 1958, էջ 381 և Բուռնութեան Ջորջ. «Հակիրճ Պատմություն Հայ Ժողովրդի (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)». Մազդա հրատարակչություն, Պենսիլվանիա, 2005, էջ 216

ավել, ոչ պակաս՝ Ժան Ժակ Ռուսոի[51] (Jean Jacques Rousseau) հետ: Կրթությունը ստացել է Փարիզի Սամուել Մուրադեան վարժարանում, որ հովանավորվում էր հնդկահայ վաճառականների և Մխիթարյան Միաբանության կողմից: Երբ վերադառնում է Թեհրան, որոշում է մահմեդականություն ընդունել: Նրա առաջնային առաքելությունն էր այն ժամանակավա իրանական հասարակության հիմնավոր ու խորն արևմտականացումը: Երբ նշանակվում է դիվանագիտական առքելությունների անդամ, վերադառնում է Թեհրան՝ լինելով Ազատ Որմնադրության նվիրյալ, միանալով «Անկեղծ Ընկերություն» (“Sincere Amitie”) Օթյակին: Վերադառնալով, հենց ինքը՝ Մալքում Խանը, հետագայում ստեղծելու էր Մասոնամետ մի կազմակերություն, որ կնքելու էր Ֆարաշմուշխանա անունով, որի պարսկական հասարակության ամենաբարձր խավերում ներդնելուց շատ չանցած՝ վտարվելու էր երկրից Շահի կղմից: Գաղափարների այլ շարվածքով և նույն հմտություններով, Շահին ներկայացնելով իր լեզվագիտական իմացություններն ընդարձակելու նպատակով, **Ավանես** (Հովհաննես) **Խան Մասսեհյանն** (Hovhanness Massehian – Mossaed) իր կյանքը նվիրում է Պարսկաստանի դիվանագիտական ներկայացչությանը և համաշխարհային գրականության ավելի քան հիսուն գործեր պարսկերեն և հայերեն լեզուներով ներկայացնելուն: Նա դիվանագիտական առաքելություններով ուղարկվել է Բերլին, Տոկիո, Փարիզ և Լոնդոն՝ երկու պատմական իրադարձությունների հետ կապված. Վիկտորիա Թագուհու գահակալման 50 -ամյակի տոնակատարությանը, ինչպես նաև նրա ծննդյան 80 - ամյակի առիթով: Մասսեհյանը եղել է Շեքսպիրի ստեղծագործությունները հայերեն թարգմանած մեծագույն թագմանիչը: Հարբինում (այժմյան Չինաստան), իր մահկանացուն կնքելուց հետո, նրա աճյունը տեղափոխվեց Թեհրան և այնտեղ պատվով թաղվեց:

Ամենահեռավոր վայրերում ևս գտնում ենք ծագումով հայ Ազատ որմնադիր եղբայրների առկայության նշաններ: Դրանք բոլորն էլ

51. Տես. այս հետաքրքիր երևույթը. Algar, H. էջ 5.

Ֆրանկմասոնության մեջ կազմավորվել են 19 – րդ դարում: Օրինակ. ֆիլադելֆիայում, 1802 թվականին հրապարակում հայտնվում է **Օհաննես Արաբյանի** անունը, որ հանդես է գալիս որպես այդ քաղաքի «**Կոլումբիա» թիվ 91 Օթյակի** Մեծառու Վարպետ[52]:

Ի վերջո, իսկապես հետաքրքիր է ճանաչել **Յանոշ Յեցին (Czetz - Hovhanness Czetzian)**[53], որ եղել է Արգենտինայի Մասոնականության մեջ ձեռնադրված առաջին հայազգին և Արգենտինա ժամանած առաջին հայերից մեկը (եթե ոչ պաշտոնապես որպես այդպիսին ճանաչվածը): Ծնվել է 1822 թվականի Հունիսի 8 –ին, Գիդոֆալվայում, Հունգարիա: Յանոշը հորը կորցնում է դեռ վաղ տարիքում, ինչ պատճառով էլ մայրը որոշում է փոքր տարիքից ուղարկել Ռեզդի Վասարհելի Ռազմական Ուսումնարան (Rezdy Vasarhely): Արդեն 1842 թվականին, 20 - ամյա հասակում, նրան, Կայսերական Որոշմամբ, շնորհվում է 1-ին կարգի Լեյտենանտի կոչում, իսկ 1846 թվականին կանչվում է Վիեննայի Գլխավոր Զինվորական Շտաբ: 1848 թվականին, մյուս հունգարացի ու հայազգի բարձրաստիճան զինվորականների հետ միասին, ինչպես օրինակ Մեզարոշ Լազարը, Յանոշ Յեցը մասնակցում է Հունգարիայի Անկախության պատերազմներին: Հեղափոխությունը ճնշվում է և Հաբսբուրգի կառավարության հրամանով մասնակիցներից տասներեք զինվորական բարձրաստիճան սպաներ մահապտժի են ենթարկվում: Լինելով գաղտնի բաժնի անդամ, Գեներալ Յանոշ Յեցը կարողանում է խուսափել ու դուրս գալ երկրից: Վտարանդությունը նրան հասցնում է Իսպանիա, որտեղ ծանոթանում է պատմական հայտնի մի անձնավորության՝ Խուան Մանուել Ռոսասի եղբոր՝ Գեներալ Պրուդենսիո Օրտիզ դե Ռոսասի դստերը, որի հետ

52. Տես. Ֆէնէրճեան Ա.

53. Տես. Avdjian de Arias Duval, Irma en “Antecedentes: Juan Fernando Czetz, coronel del Ejnrcito Argentino” en Armenia Cultura Milenaria en la Argentina de Manrique Zago. Buenos Aires. 2001.(Ավչեան Դե Արիաս Դուվալ, Իրմա. «Խուան Ֆերնանդո Յեց, Արգենտինական բանակի Գնդապետ», Մանրիկե Զագոյի Հայաստան. Հազարամյա Մշակույթն Արգենտինայում, Բուենոս Այրես, 2001 թ.(:

հետագայում ամուսնանում է: Այս ամուսնությունը նրան կապում է Արգենտինայի հետ մինչև կյանքի վերջը: Մասոնական ոլորտում նա Կոռիենտեսի **«Մշտական Միություն» (Constante Unión) թիվ 23** Օթյակի նվիրյալ է: Մասնակցում է նաև Էնտրե Ռիոսի **(Entre Ríos)** և մայրաքաղաքի՝ Բուենոս Այրեսի Օթյակների գործունեությանը: Եղել է Ռիո **Կուարտոի (Río Cuarto) «Աստղ» (Estrella) Օթյակի համահիմնադիրը՝** Դր. Բերատիի և Դր. Ստերնի հետ միասին, 1868 թ.[54]: 1884 թվականին Խուլիո Արխենտինո Ռոկան՝ Արգենտինայի Հանրապետության Նախագահը, որոշում է հիմնադրել Ռազմական Ակադեմիան և Տնօրեն է նշանակում Գնդապետ Ցեցին: Ցեցյանները եղել են միջնադրան մայրաքաղաք Անիից գաղթած հայերի հետնորդներ, որոնք Հունգարիա են մեկնել դարեր առաջ: Այսօր պետք է որ Արգենտինայում լիեն Յանոշի և Բասիլիայի ամուսնությունից սերած հետնորդները, սակայն իրականում հայտնի չէ, թե որտեղ են բնակվում:

19-րդ Դար. Բացարձակ Մթությունից դեպի Լույսն Անաղարտ Օսմանյան Կայսրություն. 1909 – 1923 թթ.

19-րդ դարում հայ Ազատ – Որնադիրների պատմությունը սկսվում է Հայոց Պատմության ամենասև էջերից մեկով: 19 –րդ դարի վերջին տասնամյակում «Մեծ Տիգրան» թիվ 1014 և «Սեր» օթյակները լուծարվել են Օսմանյան Կայսրությունում հայերի հասարակական-քաղաքական գործունեության պատճառով: Օթյակների անդամներից շատերը կասկածվում էին այս շարժումներին պատկանելու կամ սատարելու մեջ: Մյուս կողմից, ինչպես նոր կազմավորվող պետությունների մեծամասնությունում, երևում էր, որ մասոնական կազմակերպությունների անդամները

54. Նրա մասոնական գործունեության մասին տեղեկությունների հանդիպում ենք. Lappas, Alcibվades: "La Masonerվa Argentina a travոs de sus hombres". Buenos Aires, Sucesores Alcibվades Lappas, 2000. (Լապպաս, Ալսիբիադես. «Արգենտինյան Մասոնականությունն իր Մարդկանցով». Բուենոս Այրես, Ալսիբիադես Լապպաս, Հետնորդներ, 2000 թ. էջ 174(:

հույս ունեին ազատագրել իրենց ժողովուրդներին **կայսերական և/կամ գաղութային լծերից**[55].

20-րդ դարի առաջին տարիներին «Միություն և Առաջընթաց» հանձնախումբը[56] (Ittihad ve Terakki) Սալոնիկից[57] տարիներ շարունակ մշակում էր Սուլթան Աբդուլ Համիդ II –ին գահընկեց անելու ծրագիրը: Այս քաղաքից, որ գտնվում է Հունաստանի հյուսիս - արևելքում, Իտալիայի Մեծ Արևելքի[58] կողմից հովանավորված ազատ – որմնադրական օթյակները սկսեցին միանալ այս ընդհանուր նպատակի շուրջ: Մասնավորապես «**Macedonia Risorta**» օթյակը, սեֆարադի իրավաբան Էմանուել Կառասսոի (Karasu), կողմից ղեկավարվող, հավաքագրել էր այդ Հեղափոխությունը գլխավորող անձանց: Նրանց թվում էր **Սալոնիկի Դոնմեհ**[59] **համայնքի** ակնառու անձանցից մեկը՝ **Մեհմեդ Թալլաթը,** որ նշված օթյակին անդամագրվել է 1903 թ. Հունիսի 12 – ին, և որն Առաջին Աշխարհամարտի տարիներին Օսմանյան Կայսրության «Մեծ Վեզիրն» էր: Եվրոպական Մեծ Օթյակները շարունակում էին պահպանել 19-րդ դարում հիմնադրած օթյակները, սակայն օթյակներից զատ, Հեղափոխությանը հարկավոր էր իր սեփական Մեծ Օթյակը, որ կներկայացներ Կայսրությունը: Հանձնախմբի նատակը կայսրության ներսում արևմտյան ազդեցության թուլացումն

55. Լատինական Ամերիկայի անկախացումները, ԱՄՆ – ի, Հունաստանի և Իտալիայի, ինչպես նաև շատ ուրիշ երկրներում, որոնք կազմավորվում էին 19-րդ դարի ընթացքում, առաջատար դեր են խաղացել Ֆրանկմասոնական օթյակների անդամները: Ծանոթ. հեղ.

56. Տես, հատկապես. **Koloğlu, Organ: "Ittihatçilar ve Masonlar". Istambul: Pozitif Yayinlari, 2004.**

57. Տես, մասնակիորեն, Mazower, Mark: "Salonica, City of Ghosts: Christians, Muslims and Jews 1430-1950". New York: Vintage, 2005. Մազովեր. Մարկ. «Սալոնիկ՝ Ուրվականների Քաղաքը. Քրիստոնյաները, Մահմեդականները և Հրեաները»: Տես Լակովելլայի արդեն նշված աշխատանքը:

58. Տես Անջելո Լակովելլայի արդեն նշված աշխատանքը:.

59. Խոսքը գնում է Սեֆարադի – Լադինոների համայնքի մասին, որ ընտրեցին մահմեդականություն ընդունել, որպեսզի կարողանային Օսմանյան Կայսրությունում հասնել իշխանության և բարձր պաշտոնների: Ծանոթ. Հեղ.

էր կայսրության ներսում, այդ իսկ պատճառով եվրոպական Մեծ Օթյակների առաջընթացը բացասաբար էր ընդունվում: Այսպիսով, Երիտթուրքերի հեղափոխությունից հետո, 1908 –ի Հուլիսի և 1909 թ. Մարտի 3 – ին, հիմնադրվում է Օսմանյան Մեծ Օթյակը և նույն թվականի Հոկտեմբերին՝ **Բարձրագույն Խորհուրդը՝ 33 աստիճանի համար**[60]**:**

Հայ համայնքը, գրեթե ամբողջովին, այնպես, ինչպես դա պատահեց կայսրության մյուս փոքրամասնությունների համայքների հետ, հավատացին ու սատարեցին Երիտասարդ Թուրքերի Հեղափոխական – Սահմանադրական շարժմանը: Ինչպես շարժման ջատագով Պետրոս Հալաճեանը, շատ ուրիշ մտավորականներ, որ դիտարկելով «Միություն և Առաջադիմություն» հանձնախմբի քաղաքական կազմը, որոշում են սատարել այս նոր ալիքը: Շատ ուրիշներ էլ, բացի Սահմանադրական Հեղափոխությանն օգնելուց, որոշում են միանալ Օսմանյան օթյակներին: Այդ օթյակներ մուտք գործելը, իրավաբան, պարլամենտի անդամ Գրիգոր Զոհրապն ու օսմանյան «Սեբահ» թերթի խմբագիր Տիրան Քէլէկեանը դրա վառ օրինակներն են[61]: Կարևոր է նշել նաև «Սեր» Օթյակի անդամ, որ հետո, 1912 1914 թթ նշանակված էր Կայսրության Արտաքին Գործոց Նախագահ, **Գաբրիել Նորատունկյանին**[62]**:**

60. «Ավելորդ չէ հիշատակել, որ 1909 թ. Հոկտեմբերին հիմնվում է 33 Կարգի Գերագույն Խորհուրդը, որի տասչորս հիմնադիրների թվում տեսնում ենք յոթ թուրք, վեց՝ հրեա և նույն մասոնական աստիճանի մեկ հայ՝ Միքայել Նորատունկյանը». Պէյլէրեան, Ա. Էջ 173

61. Տես. HՖsnՖ, Ada. “THE FIRST OTTOMAN CIVIL SOCIETY ORGANIZATON IN THE SERVICE OF THE OTTOMAN STATE: The Case of the Ottoman Red Crescent (Osmanlı Hilal-i Ahmer Cemiyeti)”. Sabancı University,September 2004. (Հյուսնու, Ադա. «Օսմանյան Առաջին Քաղաքացիական Հասարակական Միությունն Օսմանյան Պետությանն ի Սպաս. Օսմանյան Կարմիր Կիսալուսնի դեպքը (Osmanlı Hilal-i Ahmer Cemiyeti)”.Սաբանչի Համալսարան, 2004 թ. Սեպտեմբեր):

62. Գաբրիել Նորատունկյանն օծվել է Փարիզի «Clemente Amitiո» Օթյակում հետագայում տեղափոխվել է «ՍԵՐ»:

Ինքն իրեն «Օսմանյան» կոչող մասոնականությունն գալիս էր իշխանության գլուխ:

Զուգահեռաբար, առաջին անգամ, Ստամբուլից հեռու, Հյուսենիկ (Խարբերդ) քաղաքում, Օսմանյան Մամուրեթ Ալ-Ազիզ նահանգում, հայազգի տարբեր «Եղբայրներ» միավորվում էին, որպեսզի խնդրեն Շոտլանդիայի Մեծ Օթյակին օծել մի նոր Օթյակ՝ **«Եփրատ» թիվ 1078՝** լեգենդար գետի և ամենակարևոր Լիցեյներից մեկի անունով, որ երբևէ ունեցել է հայ ժողովուրդը: **«Եփրատ» Լիցեյը**[6364] եղել է լուսավորչական հաստատություն, որ տվել է տասնյակ մասնագետներ, արվեստագետներ ու մտավորականներ: **«Եփրատ» թիվ 1078** օթյակի անդամների մեծամասնությունը Լիցեի դասավանդողներ ու ղեկավարներ էին: Օսմանյան Մեծ Արևելք Օթյակի ստեղծման (1909), ժամանակակից, Բեյրութում և ԱՄՆ քաղաքներում օծված հայազգի 8 մասոններ որոշում են չմիաալ Օսմանան Մեծ Արևելքին այլ դմում ուղարկել Շոտլանդայի Մեծ թյակին՝ նրա իրավասության տակ գործելու համար: Այսպիսով 1910 թվականի Նոյեմբերի 3-ին Էդինբուրգում նրանց հանձնվում է «Կանոնավոր կերպով Հաստատված Օթյակի Արտոնագիրը»[65]: Սկսում են գործել «Եղբայր» Սերովբե

63. Եփրատ (կամ Արմենիա, որ եղել է նրա նախնական անունը) լիցեի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար տես. Hovhannisian, Richard G. "Armenian Tsopk/Kharpert", UCLA Armenian History & Culture Series No. 3, Mazda Publishers Inc., Costa Mesa, California, 2002. Capںtulo 9 especialmente. (Ռ. Հովհաննիսյան. «Հայկական Ծոփք (Խարբերդ» Կալիֆորնիայի Լոս Անժելեսի համալսարանի պատմություն և Մշակույթ շարք, թիվ 3, Մազդա հրատարակչություն, Կոստա Մեսա, Կալիֆորնիա, 2002: Տես ամբողջապես, հատկապաս գլուխ 9):

64. Տես. KՓker, Osman; Calumeno Orlando Carlo. "Armenians in Turkey 100 years ago: with the postcards from the collection of Orlando Carlo Calumeno", Birzamanlar Yayıncılık, Istanbul, 2005. (Քյոքեր, Օսման; Կալումենո Օռլանդո Կառլո. «Հայերը Թուրքիայում 100 տարի առաջ. Փոստային բացիկներով, Օռլանդո Կառլո Կալումենոյի հավաքածո» հրատ. Ստամբուլ, 2005 թ. էջ 298, 304, 306 y 310):

65. Յուրաքանչյուր օթյակ ունի Նամակ - Արտոնագիր, տրված համապատասխան իրավասության Մեծ Օթյակի կողմից, որի հովանավորության տակ պիտի գործի օրինական կարգով: Ծանոթ. հեղ.

Վարդապետյանին պատկանող մեծ տն սենյակներից մեկում, սակայն անդամագրությունների աճի հետ «Եփրատ» Օթյակը կառուցում է իր սեփական տաճարը Մեզրե բնակավայրից ոչ հեռու, Խարբերդի շրջանում: Ցավոք սրտի ոչ «մասոնական եղբայրության» անդամությունը, ինչպես նաև այն ժամանակվա կառավարության անդամ լինելը, այս Օթյակի անդամներին ևս չփրկեց հետագա դեպքերից, որ կատարվեցին հայ ժողովրդի կյանքում սկսած 1915 թվականի Ապրիլի 24 –ից: Խարբերդը եղավ առաջին քաղաքներից մեկը, որի հայ բնակչությունը տեղահանվեց ու ցավով պետք է նշենք, որ շատ քչերը փրկվեցին քաղաքում տեղի ունեցած կոտորածից: Ենորհիվ Մելքոն Լուլեջյանի («Եփրատ» Օթյակի անդամ, եղեռնից փրկված(և ազատ որմնադիր, հետազոտող Արմենակ Ֆէնէրճեանի[66] սերտ հարաբերությունների, կարողանում են փրկել Օթյակին վերաբերվող շատ փաստեր: Հենց Եղբայր Մելքոնը[67], Տոնապետ Լուլեճեանը՝ Լիցեի կարևորագույն դասախոսներից մեկը, որ տարիներ առաջ կրթությունը ստացել էր ԱՄՆ Յելի Համալսարանում (Yale), ամենաեղերական ճակատագրին արժանացավ: Քաղաքից աքսորվելու ժամանակ, նա, ով հայտնվում է նրա ճանապարհին, ձերբակալում է նրան ու կտտանքների ենթարկում, քաղաքապետն է (kaimaknm)՝ Մեհմեդ Ասիմ Բեյը, Օսմանյան Մեծ Արևելքի անդամ մասոն: Երկուսն էլ ազատ որմնադրության անդամ լինելով, թեկուզև տարբեր իրավասությունների պատկանող, քաղաքական գործոններն ավելի ուժեղ էին ու Տոնապետ Լուլեճեանը մահվան դուռ է հասնում քաղաքապետի ու նրա զինվորների խոշտանգումների տակ[68]:

66. Արմենակ Ֆէնէրճեանը եղել է Ֆրանկմասոնության ջատագով: Տարբեր ժամանակներում հասել է «Հայաստան» թիվ 1185 օթյակի, որ հետո փոխվեց «Փարոս» թիվ 1185 –ի, Քարտուղարի և Մեծառու Վարպետի կոչման: Ենորհիվ Ֆէնէրճեանի վերը նշված հոդվածների և նրա ջանադիր ուսումնասիրությունների հնարաավոր եղավ առավել քան արժեքավոր տեղեկություններ գտնել, կազմելու համար այս պատմությունը, որպես հայազգի մասոնների պատմության ընդհանրական գաղափար: Ծանոթ. հեղ.

67. Այս պատմությունն առաջին դեմքով պատմվել է հենց իր՝ Լիլէճեանի կողմից: Տես. Լիլէճեան. Մելքոն. «Ազատ Որմնադիրները», Հայրենիք հրատ. Պոսթըն, Օգոստոս, 1958 թ.

68. Տես. Լիլէճեան, նշված հարտ., էջ 98:

Տոնապետը փրկվում է մեկ այլ թուրք մասոնի՝ Հասան Թաշինի օգնությամբ[69], որ այն ժամանակ **Օսմանյան Կարմիր Խաչի և Կիսալուսնի** հիվանդանոցի[70] Տնօրեն էր նշանակված: Նա խնամում է պատսպարում Պրոֆ. Լուլեճեանին, որը հետագայում որոշում է փորձել փրկել իր ընտանիքը և հասնում է մինչև Կարին (Էրզրում), որ այն ժամանակ գտնվում էր Ռուսաստանի պաշտպանության տակ: Ենորհիվ իր ընտանիքի սերունդների, Այսօր անժխտելիորեն փաստագրված է, կարելի է կարդալ հանգուցյալ դասախոսի, Երզնկայում, 1916 թվականի Օգոստոսի 14 –ին, սեփական ձեռքով գրված նամակը, որում նա խնդրում է ԱՄՆ Հյուպատոսարանի, ինչպես նաև ցանկացած ազնիվ Ֆրանկմասոնի օգնությունը[71]: Լինելով հարյուրավոր որբերի փրկողներից մեկը, նա վարակվում է տիֆով ու մահանում Կարինում, բոլոր ազգականներից հեռու, իր կյանքը նվիրած հայ որբուկների փրկությանը:

Մեկ անգամ ևս քաղաքական իրավիճակի ճնշման տակ վերանում է ազատ որմնադիրների հայերից կազմված օթյակը, տվյալ դեպքում, գուցե շատ ավելի փոթորկոտ իրադրության մեջ[72] [73].

---

69. Լիլէճեան ընտանիքի սերունդների գրությունները ու փաստաթղթերը ԱՄՆ –ում. Անշահախնդրորեն տրամադրել է Դեյվիդ Հեթիսընը (David Hetison – Հետիսեան) և Լիլէճեան ընտանիքը:

70. Տես. Հֆsոֆ, Ada. **"THE FIRST OTTOMAN CIVIL SOCIETY ORGANIZATON IN THE SERVICE OF THE OTTOMAN STATE:** The Case of the Ottoman Red Crescent (Osmanlı Hilal-i Ahmer Cemiyeti)". Sabancı University, September 2004. (Թաշիր Բեյի նշանակումը Հյուսնու, Ադա. «Օսմանյան Առաջին Քաղաքացիական Հասարակական Միությունն Օսմանյան Պետությանն ի Սպաս. Օսմանյան Կարմիր Կիսալուսնի դեպքը (Osmanlı Hilal-i Ahmer Cemiyeti)".Սաբանչի Համալսարան, 2004 թ. Սեպտեմբեր, էջ 32):

71. Դա մի սահմռեկուցիչ նամակ է, որ պահվում է Հետիսեան – Լիլէճեան ընտանիքի մոտ:

72. Ենտլանդիայի Մեծ Օթյակի Բարեգործական Միությունն այն տարիներին իր գործունեության մեջ նախատեսված ուներ նաև օգնել «Եփրատ» թիվ 1078 օթյակի անդամների բազմաթիվ որբացած զավակներին: Տես. Ֆէնէրճեան Արմենակ. «Ազատ Որմնադրութիւնը Մոտաւոր Արեւելքի Հայութեան Մէջ», կեանք եւ Արուեստ հրատ. Ե. տարի. Փարիզ:

73. «Եփրատ» Օթյակի անունը շարունակում է երևալ Կանոնակարգված Օթյակների

Երիտթուքերի հեղափոխությունն իր վերջին է հասնում, երբ միացյալ ուժերը, առաջին ա համաշխարհայինի ավարտից հետո ներխուժում են այն տարածք, որ դառնալու էր Թուրքիայի Հանրապետություն: Ձանալով նմանվել Իտալիայի Կարբոնարիներին (1807–1832 Իտալիաում գործող գաղտնի կազմակերպություն, որ ծեսերի ժամանակ ածուխ՝ կարբոն, էին այրում, որպես կրակով մաքրման խորհուրդ), Երիտթուրքերը փորձեցին մասոնական պետություն ստեղծել, որն ամբողջովին դուրս էր կանոնից ու հեռու այն օրենքներից, որոնցով առաջնորդվում են Մասոնները: Ինչպես նշում է այդ հարցերում առաջատար մասնագետներից մեկը՝ Փոլ Դյումոնը (Paul Dumont). « † ցինիկորեն, Երիտթուրքերն օգտագործեցին Մասոնականությունը՝ դրան հակադիր գործելու համար†»[74]:

Այս իսկ պատճառով, բոլոր հաջողություններն ու սխալները պետք է կապել հենց այս անհատների (թեև՝ մասոններ) հետ և ոչ թե Կազմակերպության (Մասոնության): Կազմակերպության հետ կապելը բավական հաճախ հանդիպող սխալ է այն տարների պատմության կողմնակալ վերլուծության ժամանակ:

Առաջին Համաշխարհայինի ավարտից և Երիտթուրքերի մասնակի դատավարությունից հետո, հայազգի շատ մասոններ, որ պատկանում էին Ստամբուլի Ավանդապահ Օթյակներին, ինչպես

ցանկում մինչև 1920 թվականը ներառյալ: Տես. «List of Regular Lodges of F.A.F.M. for the Grand Lodge of New Jersey, 1920», Pantagraph Printing and Stationary Co., Illinois, March 1920. (Ազատ և Ընդունված Ֆրանկմասոնների Կանոնակարգված Օթյակների Ցուցակ Նյու Ջերսիի Մեծ Օթյակի համար: Pantagraph Printing and Stationary Co. հրատարակչություն, Իլինոյզ, 1920 թ. Մարտ):

74. Տես. Dumont, Paul: "Freemasonry in Turkey: a by-product of Western penetration," European Review, Cambridge University Press, vol. 13(03), July. (Դյումոն, Փոլ. «Ազատ որմնարությունը Թուրքիայում. Արևմտյան ներթափանցման կողմնակի արդյունքը» Եվրոպական Վերլուծական տեղեկագիր, Քեմբրիջի Համալսարանի հրատ. հատոր 13/03 (Հուլիս, վերջին էջը՝ 493):

օրինակ «**La Turquie**» **թիվ 1049 օթյակը**, որոշում են նորից դիմել Շոտլանդիայի Մեծ օթյակին նոր «Ազատ Որմնադրական» աշխատանոց բաց անելու խնդրանքով: 1918 թվականի առաջին ամիսներից հայ եղբայրները, որոնք գտնվում էին Շոտլանդական Մեծ օթյակի իրավասության տակ, հատկապես վերը նշված «**La Turquie**» **թիվ 1049** Օթյակը կապ էր պաշտպանում Շոտլանդական բարձր իշխանությունների հետ, մինչև որ 1919 թվականի Մայիսի 1 –ին ստանում են Նամակ - Արտոնագիրը «**Հայաստան**» **թիվ 1185**[75] **Օթյակի հիմնադրման համար**, որ դառնալու էր Թուրք – Օսմանյան տարածքում գործող վերջին Օթյակը: Շատ կարևոր է պարզաբանել, որ Շոտլանդական Մեծ Օթյակը 1919 թ. Հունիսի 26 –ին մի ուղերձ հղել, որում ասվում է. «Արգելվում է որևէ հարաբերություն Օսմանյան Մեծ Արևելքի որևէ եղբոր հետ, լինեն նրանք ծագումով հայ թե ոչ»: Այսինքն՝ այն ժամանակ Օսմանյան Մեծ Արևելքը չէր ճանաչվում որպես կանոնակարգված մասոնական օթյակ: «**Հայաստան**» **թիվ 1185** Օթյակի արարողություններում է, որ առաջին անգամ ընդհանրապես օգտագործվում է հայկական եռագույն դրոշը մասնական ծեսում: Ու նորից, այն եղբայրները, որոնք կարիք էին զգում վերադառնալու Ազատ – Որմնադրական աշխատանոցներ, «Հայաստան» թիվ 1185 Օթյակում գտնում են այն անկյունը, որտեղ առկա էին եղբայրական կապերը: Ի տարբերություն նախկին դեպքերի, Ստամբուլի հայ հոգևորականության շատ բարձրաստիճան ներկայացուցիչներ որոշում են միանալ այս Օթյակին, որ պարզորոշ ցույց է տալիս, որ **Կանոնակարգված Մասոնականությունը հակակրոնական չէ**[76]: Չնայած այն բանին, որ ունեցել է հարյուրից ավելի անդամներ (125), «**Հայաստան**» **թիվ 1185** Օթյակի սյուները խալխլվում են[77] 1923 թվականին,

75. Այս օթյակի մասին հմնավոր վերջնական տեղեկությունների համար տես Արմենակ Ֆէնէրճեանի գործն ամբողջովին: Հիրավի ամենալիակատար աշխատությունն է:

76. Տես. Համբարձումեան, Հ. Մ. «Կապոյտ Օթեակ» Հին Խորհրդավոր Վարդապետութիւններու և Ազատ Որմնադիրներու Ճշգրիտ Սկբնավորութիւնը» Փարիզ, 1961, էջ 3:

77. Մասոնական լեքսիկայում նշանակում է անկում, Մասոնական Օթյակի վճռական ու

նոր քաղաքական իրադրության պատճառով, որ առաջ էր եկել Թուրքիայի Հանրապետության ստեղծմամբ:

Հայկական Ժողովրդավարական Հանրապետություն (1918), Սովետների գալուստը և վերջնական վտարանդիությունը

Կովկասյան ճակատում և Հայկական Ժողովրդավարական Հանրապետության գոյության ընթացքում (1918-1921) առաջատար դեր խաղացին կարևորագույն անհատներ, որոնք հետո լինելու էին Ազատ Որմնադրության՝ մասոնականության, անդամներ: 19-րդ դարից սկսած Ֆրանսիայի Մեծ Արևելքը, արդեն պաշտոնապես կտրած լինելով կապերը Կանոնակարգված Մասոնականության հետ, սկսել էր տարբեր օթյակների ստեղծումը Սան Պետեռբուրգում և Մոսկվայում: Ռուսաստանում Հեղափոխության հաղթանակից հետո (1917), Ֆրանսիական հովանավորության տակ գտված մասոնականության մեծ թվով նվիրյալներ արտագաղթում են Փարիզ: Ռուսահայ կին մտավորական Նինա Բերբերովայի[78] ջանադիր, մանրակրկիտ աշխատանքը լույս աշխարհ հանեց Ռուսաստանի մասոնների 19-րդ դարի գործունեության շատ մանրամասներ, հիմնականում՝ Ֆրանսիայի մայրաքաղաքում: Նրանց թվում աչքի են ընկնում հայ քաղաքական գործիչների ու հռչակավոր մարդկանց անուններ, որոնք արտագաղթել են՝ փաձչելով բոլշևիկների հետապնդումից[79]: Այս թեմայի սիրահար Ն. Բերբերովան մեծ քանակով տեղեկություններ ունի այդ մասին, քանի որ նրա մոտ

վերջնական լուծարք, փակում:

78. 20-րդ դարի հայտնի կին գրողը միշտ էլ հետաքրքրվել է մասոնականությամբ, հենց իր ազգակցական կապերի պատճառով: Տես ամբողջությամբ. Berberova, Nina: “Les Francs-macons russes du XXe siՌcle”, traduit du russe par Alexandra Pletnioff-Boutin, Les editions Noir Sur Blanc, Actes Sud, 1990.(Տես. Բերբերովա, Նինա. «Ռուսական Ֆրանկմասոնները 20-րդ դարում» Noir Sur Blanc հրատ. Հարավային արձանագրություններ, 1990):

79. Բացարձակ բռնատիրական ռեժիմների օրոք Ֆրանկմասոնությունը մտ էլ հետապնդվել է , արգելվել և անդամազրկվել: Ծանոթ. Հեղ.

ազգականները՝ Ռուբեն, Մինաս և Լևոն Բերբերովները (Բերբերյան), բոլորն էլ եղել են Ազատ Որմնադիրներ: Մինաս Բերբերյանը՝ Նինայի հորեղբայրը, Հայաստանի Հանրապետության գոյության սկզբում եղել է ամենակարևոր դեմքերից մեկը: Ֆրանսիական Մեծ Արևելքի կողմից հովանավորված Ֆրանկմասոնությունը, որտեղ քննարկվում էին քաղաքական ու կրոնական թեմաներ, իր շարքեն ընդունեց մի օթյակ՝ այսպես կոչված «**Etoile du Nord**»[80] **(Հյուսիսային Աստղ),** որում օծվել էին այդ տարիների ընթացքում հայազգի յոթ եղբայրներ. **Ալեքսանդր Խատիսովը (Խատիսյան), Միքայել Տեր-Պողոսյանը, Ստեփանոս Նավասարդյանը, Արշակ Չամալյանը, Ռուբեն Բերբերյանը, Սիմոն Վրացյանը, Վահան Փափազյանը և Հովհաննես Զավրյանը:** Ոմանք ավելի ընդարձակ գործունություն են ունեցել Հայկական Ժողովրդավարական Հանրապետության տարիներին: Ալեքսանդր Խատիսյանը[81]՝ դուքս Նիկոլայ Նիկոլայևիչի մտերիմ ընկերը և Սիմոն Վրացյանը[82], երկուսն էլ Վարչապետի պաշտոն են գրավել Հանրապետությունում: Ֆրանսիական Մեծ Արևելքի մեջ, երկուսը միասին հետևել են շոտլանդամետների աստիճաններին[83]: Ֆրանսիայի Մեծ Օթյակի հովանավորության տակ, և ոչ Մեծ Արևելքի, հանդիպում ենք այնպիսի անունների, ինչպես օրինակ **Իոսիֆ Գրիգորևիչ Լորիս – Մելիքով**[84], Լորիս – Մելիքով տոհմի ներկայացուցիչ: Իոսիֆը եղել է Ցարի դեսպանը Սիամում

80. Տես. Ֆէնէրճեան, Դեկտեմբեի հրատ. 1955 թ.

81. Տես. Բերբերովա, վերը նշված աշխատանք. էջ 124:

82. Խատիսյանի և Վրացյանի հարաբերությունները միշտ էլ սերտ են եղել: Տես, մասնավորապես Վրացյանի նախաբանը, որ նվիրված է Խատիսյանի գրքին. Խատիսյան, Ալեքսանդր. «Հայաստանի Հանրապետության Ծագումն ու Զարգացումը», Համազգային Տպարան, Պէյրութ, 1968:

83. Չնայած, որ իր փիլիսոփայությունը հեռու թր պահում կանոնավոր ուղղությունից, Ֆրանսիական Մեծ Արևելքն, այնուամենայնիվ պահում է 33 աստիճանների սանդղակը: Խատիսյանը հասավ միչև 33 աստիճանի, Վրացյանը ՝ 18: Տես. Բերբերովա, Նինա. Վերը նշված աշխատանք:

84. Տես. Բերբերովա. Նինա, նշված աշխատանքի 131 էջ:



The blue lodge of F. Masonry

ԿԱՊՈՅՏ ՕԹԵԱԿ

ՀԻՆ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԵՒ
ԱԶԱՏ ՈՐՄՆԱԴԻՐՆԵՐՈՒ
ՃՇԳՐԻՏ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

★

ՍԿՈՎՏԱԿԱՆ ՄԱՍՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
ԱՇԱԿԵՐՏ, ԸՆԿԵՐ ԵՒ ՎԱՐՊԵՏԻ
ԾԷՍԵՐ ՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

★

Պատրաստուած
Հ. Մ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԷ, 18ՐԴ
Էտիմպուրկի Բարձր Օթեակէն վկայուած եւ
Ֆրանսա-Հայաստան Օթեակին նախկին անդամ ի Փարիզ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Որմնադրութիւնը ճանչցնել կը նշանակէ զայն սիրցնել։ Պաշտօնական ծիսակատարները որմնադիրներ կը պատրաստեն։ Ասոնք ալ՝ իրենց կարգին՝ ընծայացուներ։

1961, ՓԱՐԻԶ
5965 Ա. Ո. Թուական

Կապույտ Օթյակը. թարգմանել է Հ.Մ. Համբարձումյանը։ Փարիզ, Ֆրանսիա, 1961 թ.

(Հնդկաչին. ծանոթ. թարգմ.), Նորվեգիայում, և Շվեդիայում: Բնականաբար նորից հանդիպում ենք Ռուբեն Բերբերյանի՝ Նինայի մյուս հորեղբոր անվանը, որ 1902 թվականին օծվել էր Փարիզում և ում պարտական ենք Կոստանդնոպոլսի «Սեր» Օթյակի մասին տեղեկությունների մի մասի համար[85]:

Այդ տարիներին, ի հետևանք Օսմանյան Կայսրությունում կազմակերպված կոտորածների և Կովկասում խորհրդային կարգերի հաստատման, շատ հայ Ազատ-Որմնադիրներ ապրտագաղթում են, ընդարձակելու համար «**Հայ Սփյուռքը**»:

Սփյուռքի Օթյակների «Տոհմաբանությունը»

Օսմանյան Կայսրությունում տեղի ունեցած Հայկական կոտորածների տարիներին, Սփյուռքում, հռչակավոր «Եփրատ» Լիցեի շրջանավարտ Հայկակ Հ. Խազոյանը Նյու Յորքում հիմնում է «Հայ Ավետարանական Եկեղեցին»: 1916 թվականին Հովիվ Խազոյանն, այլ կրոնավորների ու մտավորականների հետ որոշում Ֆիլադելֆիայում հիմնել նաև **Վարդանանց Ասպետների** երդվյալների կազմակերպությունը՝ մարդասիրական և մշակութային նպատակներով: Խազոյանը եղել է կանոնավոր գործող Ֆրանկմասոն և այն ժամանակներում հասած է եղել Ֆրանկմասոնության մեջ շատ լուրջ 32 –րդ աստիճանի: Չնայած նշված կազմակերպությունը մինչ այժմ գործում է և ունի Ֆրանկամսոնականին[86] մոտ կառուցվածք, **չունի Մասոնական բնութագիր:**

20 –րդ դարի առաջին տասնամյակներին կարելի է նկատել Հայ Օթյակների գործունեություն, որ կանոնավոր բնույթի չեն, ինչպես նախկինում նշվածները: Դրանցից մեկը՝ «**FRANCE**

---

85. Ռուբեն Բերբերյան (տես. Նշումները) Նինա Բերբերովայի հորեղբայրն է: Ծանոթ. հեգ..:

86. Այն բաժանվում է ճյուղեր և օթյակների, կիրառելով բրգաձև կառուցվածք, որ նման է Ֆրանկմասոնականին:

– ARMENIE»՝ Ֆրանկամետ օթյակներից մեկում օծվել էին մեծ թվով հայեր, որոնցից շատերը «Հայ Դատի» ու նաև այլ, քաղաքական ոլորտի, նվիրյալներ էին: «**France-Armenié**» Օթյակի անդամներից մեկն էր, որ հայերեն թարգմանեց մասոնական խորհրդանշական գրքերը, դրանց մեջ՝ Ֆրանկմասոնության Երկնագույն Օթյակը: Համբարձումյանն աչքի է ընկել որպես Ֆրանկմասոնական առաջին 3 աստիճանների մասոնական ծեսերի առաջին թարգմանիչներից մեկը[87]: Հայկական Սփյուռքի կազմավորման առաջին տարիներին եղել են համայնքներ, որ ժամանակի ընթացքում թուլացել են: Այդպես է պատահել Հունաստանի հայ հայնքի հետ, որտեղ կային բազմաթիվ օծված հայ մասոններ, նաև Եգիպտոսում ապաստան էին գտել տարբեր Հայկական Օթյակներ: Հիշատակման արժանի Օթյակներից մեկն էլ

եղել է «**Նուբար**»[88] **Օթյակը**, հիմնադրված 1937 թվականի Հունիս 11 -ին, Կահիրեում:

2-րդ Համաշխարհային Պատերազմից առաջ նորից հայտնվում է Նորատունկյանների[89] հայտնի ազգանունը՝ կապված Ռումինիայում Ֆրանկմասոնության կազմավորրման ու զարգացման հետ: **Միքայել (Mihail) Նորատունկյան[90],** 33-րդ Աստիճանի Օսմանյան

87. Գործը մասունք է իսկական և շատ կարևոր արարողակարգին ծանոթանալու համար, մասնավորապես հայերեն լեզվով: Տես. «Համբարձումեան, Հ.Մ. «Կապոյտ Օդեակ», Հին, Խորհրդավոր Վարդապետութիւններու և Ազատ Որմնադրության Սկզբնավորութիւնը» Փարիզ, 1961:

88. Տես. Ֆէնէրճեան. Հոկտեմբերի հրատ. 1955: Նկատենք նաև, Եգիպտոսի Մեծ Արևելքի ներսում հայ անդամների գոյությունը, երբ կազմակերպությունը կանոնակարգված չէր ու Ֆրանկմասոնների կողմից չէր ընդունված: Ծանոթ. Հեղ. .

89. Հարություն, Գաբրիել և Միքայել Նորատունկյանները բոլորն էլ նույն ընտանիքից էին: Ծանոթ. Հեղ.

90. Տես. լայնածավալ հիանալի աշխատանքը, գրված. Nestorescu-Balcesti, Horia. “Noradunghian, Mihail: Record from Masonic Lexicon”. Masonic Forum Autum-Winter. Grand Lodge National of Romania. 2005-2006. (Նեստորեսկու-Բալցեստի, Հորիա. «Նորատունկյան, Միհայլ. Մասոնական լեքսիկայի արձանագրություններ» Աշուն – Ձմեռ Մասոննական ֆորում; Ռումինիայի Ազգային Մեծ Օթյակ: 2005 - 2006):

Գերագույն Խորհրդի համահիմնադիր անդամ (1909թ Մարտի 13), որ Երիտթուրքերի իշխանության անկումից հետո հետապնդվում է քեմալիստների կողմից, սակայն հաջողացնում է փախչել Լոնդոն: հետո հայտնվում է Փարիզում, որտեղ ջանում է օրինականացնել իր Մասոնական աստիճաները: Օգնություն ստանալով Ֆրանսիայի Գերագույն Խորհրդի կողմից, վերստին օծվում և «Կանոնակարգվում» 1922 թվականին: Ռումինացի քաղաքական գործիչ ժան Պանգալի հետ միասին հաջողում են Ռումինիայում տասնյակ օթյակներ ստեղծել, որոնք գործում են Շոտլանդական Հինավուրց ու Ընդունված Ծիսակարգի համաձայն: Այս օթյակները հիմնելուց հետո որոշում է կանոնակարգել Ռումինիայի Գերագույն Խորհրդի հիմնադրումը: Լինելով աշխարհաքաղաքանության և գործարարության հիմնավոր գիտակ, Նորատունկյանը փորձում է խափանել Խորհրդային զորքերի մուտքը Ռումինիա, ջանալով հիմնել **Միջերկրականի Հարավի Մեծ Օթյակների Գերագույն Խորհուրդ**, որ, նրա ծրագիր համաձայն, պետք է կատարվեր ԱՄՆ օգնությամբ: Նրա ծրագիրը ձախողվում է և 40-ականների վերջում թույլ է տալիս, որ ռումինական մասոնականությունը «քուն մտնի»[91]: Կարևոր մի մանրամասն, որ տեսնում ենք Բուխարեստի Հայկական գերեզմանատան նրա տապանաքարի վրա. «Միհայլ Նորատունկյան, 1873 – 1951. ղեկավար և Մեծ Հրամանատար Ռումինիայի Գերագույն Խորհրդի, Բագրատունյաց Տոհմի 27 –րդ սերունդ»[92]: Նրա «աշխարհիկ» կյանքի քարտուղարը[93], որ եղել է նաև նրա մասոնական կյանքի քարտուղարը, մեկ այլ հայտնի հայ էր՝ Նուբար Բոհցելին (Բոհցելյան)[94]: Նուբարը հետևել է

91. Քուն մտնել արտահայտությունը նշանակում է անհատ անձի (մասոն) կամ մի խմբի (օթյակ) գործունեությունը սառեցվում է տարբեր պատճառներով: Ծանոթ. Հեղ.

92. Հայ թագավորական տոհմերից մեկը: ՀՀ այժմյան գերբի վրա Բագրատունիներին ներկայացնող խորհրդանիշն է:

93. Աշխարհիկ բառը գալիս է մասոնական բառապաշարից: Կիրառվում է այն մարդկանց համար, ում կյանքն անցնում է սովորական առօրիայով՝ Տաճարից դուրս:

94. Կարելի է նշել մեծ թվով հայազգի եղբայների առկայությունը Ռումինիայում Ֆաբիան Անտոնի հոդվածների վրա հիմնվելով. Տես. “Armenii Կn Masoneria RomՉnească”:

Նորատունկյանին մինչև նրա վերջին շունչը: Խորհրդային զորքերի Ռումինիա մտնելուց հետո շատերը ձերբակալվեցին, որոնց թվում նաև Նուբար Բոհցելին, որը Ռումինիայի Գերագույն Խորհրդի քարտուղարը լինելու իր «հանցանքի» համար 10 տարի բանտում անցկացրեց: Մեկ անգամ ևս քաղաքական հետապնդումը վերջ է դնում մեծ թվով հայազգի եղբայրների, որոնք միավորվել էին Արևելյան Եվրոպայի այս երկրում:

Մի քանի տարիներ անցան մինչև որ նորից սկսեցին ծնունդ առնել մոլորակի **Մասոնական տարբեր Իրավասությունների** տակ գործող հայկական կանոնակարգված օթյակներ: Չի կարելի չընդունել, որ հայ համայնքները, որոնց անդամների մեծամասնությունը Եղեռնից, ու նաև 2-րդ Համաշխարհային Պատերազմից փրկվածներ էին, սկսում էին զարգանալ, առաջընթաց ապրել: Արդեն օծվածները սկսում են ի հայտ բերել իրենց ինքնությունը, որպես «Որմնադիր Եղբայրներ»՝ կարողանալու համար ստեղծել նոր աշխատանոցներ, հայերի մեջ եղբայրության հասկացության ընդարձակելու, համապարփակ դարձնելու միտումով:

Անցյալ դարի 50 -ականներին գրանցվում է առաջին Հայկական Օթյակը ԱՄՆ-ում[95]: 1952 թվականի Հունիսի 21 –ին, Միչիգանի Նահանգի Դետրոյդ քաղաքում, հիմնվում է «**Արարատ» թիվ 582 Օթյակը[96]:** Ընդունելություն է կազմակերպվում ավելի քան 500 (հինգ հարյուր) եղբայր մասոնների համար, որոնք ներկայացել

Ararat-Bilunar al Uniunii Armenilor din RomՉnia, Bucuresti, Aprilie (7)-Iulie (13) 2007. («Հայերը Ռումինիայի Մասոնականության մեջ», Արարատ - երկամյա պարբերական, Ռումինահայերի Միություն, Ապրիլ - Հուլիս)

95. Այս հողում ամենից ավելի ճանաչված պամությունը, թերևս Եղբայր Սարգիս Նահիկյանինն է՝ ԱՄՆ Ֆրանկմասոնության կողմից օծված: Խուսափելով Աբդուլ Համիդի 2-րդի կազմակերպած կոտորածներից, հասնում է ԱՄՆ որտեղ ստեղծում է գորգագործության մեծ գործարան: Ի նշան երախտագիտության Ֆրանկմասոնության և երկրի նկատմամբ, նվիրում է պարսկական գորգերից մեկը ՝ աշխարհի ամենամեծը, որը մինչև հիմա զարդարում է Ջորջ Վաշինգտոնի Հուշարձանային համալիրը: Ծանոթ. Հեղ.

96. Տես. Ֆէնէրճեան: Դեկտեմբերի հրատարակություն, 1955 թ.:

էին Մասոնական նշված Օթյակի, աշխատանոցի բացման արարողությանը: Յուրաքանչյուր ամսվա առաջին երկուշաբթի այս օթյակի անդամները հավաքվում էին Միչիգանի նահանգի Մեծ օթյակի մեծ Տաճարում: Ցավոք զանազան պատճառներով այս օթյակի անդամները միաձուլվեցին այլ օթյակների հետ, քանի որ «**Արարատ**» **թիվ 582** –ը դադարեցրեց իր գոյությունը: Այս օթյակի հիմնադիրների ցուցակում կարելի է գտնել Միչիգանի Նահանգի հայ համայնքի ցայտուն անհատականությյուններից շատերի անունները:

Նույն տասնամյակի ընթացքում, 1957 թվականին, սկսում են միավորվել Արգենտինայում՝ Բուենոս Այրեսում բնակվող հայերը, որոնց մեծամասնությունն օծված էր եղել եվրապական տարբեր երկրներում: Նրանց մեջ էին շատ եղբայրներ, որոնք հետապնդվել էին Համայնավարների կողմից[97]: Այդ «եղբայրները» սկսում են բացահայտել միմյանց և 1957 թվականին միավորվելով սկիզբ տալիս «Արարատ» թիվ **404 օթյակին**՝ Արգենտինայի Ազատ ու Ընդունված Որմնադիրների Մեծ օթյակի հովանավորության ներքո: Նրա առաջին Մեծծառու Վարպետը եղել է Ստեփան Տիրատուրյանը՝ Հունաստանից արտագաղթած: Աչքի են ընկել, շատերի թվում, Վահե Մերդինյանը[98], Վահե Մարաշլյանը և Արամ Գալֆայանը, երեքն էլ Արգենտինայի բարձրաստիճան 33-րդ աստիճանի Մասոններ: «**Արարատ**» **թիվ 404 օթյակը** շարունակում է գործել մինչև օրս և զբաղվում է հիմնականում Բուենոս Այրեսի հայ համայնքին վերաբերվող հարցերով:

Անկասկած, սփյուռքի հայության կարևորագույն

97. Ֆաբիան Անտոնի հոդվածներրում նշվում են Մանուկյան Եղբայրները՝ «Արարատ» թիվ 404 Օթյակի հիմնադիրները, որոնք Ռումինիայից արտագաղթել էին համայնավարների կողմից հետապնդվելու պատճառով:

98. Վահե Մերդինեան (ծն. 22.07.1920, մահ. 23.05.2005), մեծ բարեգործական, մարդասիրական գործունեություն է ծավալել, թե Արգենտինայի Մասոնական Մանկատան համար և թե Բուենոս Այրեսի Հայ համայնքի շրջանակներում, նվիրատվություններ է կատարել, հատկապես շատ է օգնել Բուենոս Այրեսի Մխիթարյան դպրոցին:

կենտրոններից մեկը եղել է Բեյրութը: 19-րդ դարի վերջին տասնամյակների ընթացքում, Ստամբուլի պես, եղել է մշակութային կարևոր կենտրոն և մեծացել է հետ - եղեռնյա ժամանակներից մինչև 70-ական թվականները: 50-ական թվականների վերջին, Նյու Յորք նահանգի Մեծ Օթյակի արտոնությամբ, ստեղծվում է «**Անի» թիվ 11 Օթյակը,** որ գործում է հայերեն լեզվով և փայլուն գործունեություն է տանում արդեն մի քանի տասնամյակներ շարունակ: Նրա անդամներից մեկը՝ Լեոն Զեյթունալեանը, նշանակվել է Նյու Յորքի Մեծ Օթյակի Գերագույն Մեծարգո Վարպետ Լիբանանի տարածաշրջանի համար: Ցավոք, պատերազմի պատճառով, որ այնքան մեծ հարված հասցրեց Բեյրութին և ամբողջ Լիբանանին, «**Անի» թիվ 11** Օթյակի շատ Եղբայրներ որոշեցին փնտրել այլ հորիզոններ, մեկնելով հիմնականում ԱՄՆ և Կանադա: Ծնորհիվ «**Անի» թիվ 11** Օթյակի և հայոց լեզվի ու հայ մշակույթին սերտ կապված լինելուն, կարողացել են մեծ թվով ուսումնասիրություններ կատարել՝ օգտվելով Ազատ–Որմնադրական փիլիսոփայությանը վերաբերվող հայալեզու աղբյուրներից[99]:

ԱՄՆ պետական օթյակներում կա կազմակերպման մի ձև, որ կոչվում է «**Մասոնական Թիմ**» կամ՝ «**Մասոնական Աստիճանի Թիմ»:** Կազմակերպման այս ձևը թույլ է տալիս միավորել տարբեր կամ միևնույն օթյակի «եղբայրներին» մասնագիտացված խմբերում, որոշակի աշխատանքի իրականացման նպատակով: 1973 թվականին Ռոդ Այլանդ (Rhode Island) Նահանգում հիմնվում է «**Հայ Մասոնական Աստիճանի Թիմ»[100] (Armenian**

99. «Անի» թիվ 11 օթյակը կարողանում է վերաենդանանալ 1986 թվականին և հիմնում է իր սեփական Քաղաքացիական Միությունը, որպեսզի կարողանար զարգանալ Լիբանանի պատերազմից կրած մեծ կորուստներից ու տառապանքներից հետո: Տես. ամբողջությամբ Ani Periodical. "A Publication of the Ani Lodge No. 11", Duoprint, Beirut, 2002. (Անի պարբերականը. «Հրատարակություն Անի թիվ 11 օթյակի մասին» Դուպրինտ, Բեյրութ,2002.

100. Տես. Karetz, Varoujan: "Mitchnapert the Citadel: A History of Armenians in Rhode Island", iUniverse Inc., 2004 y espcielamente Scimitar. "Official Publication of the Rhode Island Shriners". August(September 2009. Rhode Island. 2009. (Կարեց, Վարուժան.

Masonic Degree Team), որն այն նահանգում օտարալեզու կազմակերպությունն էր: «**Հայ Մասոնական Աստիճանի Թիմ**»-ի անդամները տարբեր օթյակներից էին, ինչպես օրինակ՝ «**Օրֆեոս**» **թիվ 36,** Ռոդ Այլանդի Մեծ Օթյակի Իրավասության տակ գտնվող, պարզ է: Հայ Եղբայրները, այս խմբի հետ միասին շարունակում են աշխատել ու պատիվ բերել Ռոդ Այլանդի հայ համայնքին, աշխատելով նաև մերձեցնել հայազգի եղբայր մասոններին հայ համայնքի աշխարհիկների հետ:

Վերջին տասնամյակների ընթացքում հայտնվում են մի շարք հայկական օթյակներ, որ դառնում են Հայ Ազատ Որմնադիրների Միության ամենանշանակալի ձեռքբերումներից մեկի՝ Հայկական Մեծ Օթյակի կազմավորման նախաշեմը: 1987 թվականին Լոնդոնի ոչ այնքան ստվար հայկական մի համայնք, Անգլիայի Միացյալ Մեծ Օթյակի Իրավասության տակ, իր անդամներից մարդիկ է հատկացնում՝ հմուտ և պատրաստված, որոնք Սուրեյ գավառի Սաթըն (Sutton, Provincia de Surrey) բնակավայրում, Լոնդոնից ոչ հեռու, հիմնում են «**Արարատ լեռ**» **թիվ 9239** Օթյակը: Այս օթյակը հավաքագրում թե հայազգի մասոնների և թե նրանց հետ ազգակցական կամ այլ կապերով կապված ոչ հայերի: «Արարատ լեռ» թիվ 9239 Օթյակը ժողովներ է գումարում հատուկենտ առիթներով և անդամներ ունի աշխարհի տարբեր մասերում: Հարկ է նշել, որ «**Արարատ Լեռ**» **Օթյակի** շատ եղբայրներ բարձր կարգերի են հասել Անգլիական մասոնականության մեջ, իսկ Պատվելի Եղբայր Էդուարդ Սահակյանը՝ Անգլիայի Միացյալ Մեծ Օթյակի ներկայացուցիչը:

Այժմ, այո, տարիներ են անցել, որպեսզի հայ եղբայրների

«Միջնաբերդ - ամրոց. Լոդ Այլենդի հայերի պատմությունը» Յունիվերս Ինկ. Հրատ. 2004թ, և հատկապես. Շիմիտար «Ռոդ Այլենդի Շրիներների* պաշտոնական հրատարակությունները» Օգոստոս – Սեպտեմբեր, 2009 թ. էջ 14 -15) *1870 հիմնված արաբական կազմակերպություն, որ հետևում էր հինավուց խորհրդավոր ծեսերին, Հետագայում երևան եկավ Շրիներների Միջազգային կազմակերպությունը, որ հիմնվել էր նաև ԱՄՆ-ում: Ծանոթ. թարգմ.

ամենաստված համայնքն ունեցող երկրներից մեկում սկսվի օթյակների հիմնադրման գործընթացը: Ֆրանսիայի Ազգային Մեծ Օթյակը[101] գոհունակությամբ հաստատել արդեն կազմակերպված հայկական Ազատ Որմնադրական օթյակների արտոնությունները: 1993 թվականի Հունիսի 5 –ին շատ Պատվելի Նահանգային Գերագույն Մեծարգո Վարպետ Մաքս Բենոյելը (Max Benoyel) Մարսելի շրջակայքում գնտվող Վալյե Դե Աուբան (Valley de Aubagne) բնակավայրում հիմնում է «**Արարատ**» **738 Օթյակը**, որ գործունեությունը նվիրված էր տվյալ քաղաքի հայ եղբայրերին միավորելուն: 1995 թվականին հիմնվում է Փարիզում **"Armenie-Hayastan" թիվ 957** Օթյակը, որի առաջին Մեծառու Վարպետը Եղբայր Լեոն Հովնանյան է դառնում, իսկ 1997 թվականին Լիոնում հիմնվում է «**Lumieres D'Ararat**» **(Արարատի Լույսեր) թիվ 1049 Օթյակը,** որտեղ Սողոմոնի գահն[102], այդ օթյակում առաջին անգամ, զբաղեցնում է Պատվելի Եղբայր Ալեքսիս Փիրամյանը: Շնորհիվ բոլոր Ֆրանսահայ եղբայրների մշտական համատեղ ջանքերի, մեկ այուն ևս դրվեց Հայկական Մեծ Օթյակի կառուցման համար:

Հենասյուներից մեկն էլ դրվել է շնորհիվ Ռուսաստանի Դաշնության մեր հայ եղբայրների ջանքերի: Բեռլինի պատն արդեն քանդվել էր և Մասոնական գործունեության համար արգելքն այլևս գոյություն չուներ: Շնորհիվ Մասոնական մեր փորձի, Ռուսաստանի Մեծ Օթյակը նորից սկսում է ծաղկել: 1998 թվականի նոյեմբերի 28 –ին Ռուսական Մեծ Օթյակը հիմնում է "Северное Сияние" «**Հյուսիսափայլ**» **թիվ 9** օթյակը Մոսկվայի տակ: Այս օթյակը գործում է հայերեն լեզվով և մեծ կապեր ունեն Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում բնակվող եղբայրների հետ: Նշանակալից է, որ այս Օթյակն, ի հիշատակ Մասոնական

---

101. Ֆրանսիայի Ազգային Մեծ Օթյակը Մասոնական օրդեն է ՝ կազմակերպություն, ընդունված և կանոնակարգված: Որևէ կապ չունի Ֆրանսիայի Մեծ Արևելքի հետ:

102. Այսպես է կոչվում Մեծ օթյակում Գերագույն Մեծարգո Վարպետի կամ Մեծառու Վարպետի զբաղեցրած տեղը: Ծանոթ. Հեղ.

աշխատանոցի, որին անդամակցված էին զգալի թվով հայեր, կոչվում է «Հյուսիսային Աստղ» (Etoile du Nord):

Որպես Հայազգի Մասոնական պատմության մեջ հաջորդ դարում կատարվելիք մեծ իրադրության նախաբան, ԱՄՆ-ում ծնվում է մի օթյակ, որ միավորում է հայազգի բոլոր Ազատ – Որմնադիրներին, ովքեր ցանկություն կհայտնեն մասնակցել Ազատ Որմնադրական աշխատանքներին, ԱՄՆ որ նահանգում էլ որ բնակվելիս լինեն: Բացի վերը նշված օթյակներից, ԱՄՆ շատ Մեծ, Պետական օթյակներ, նախկինում թույլ չեն տվել օտար ազգային ծագումով կամ օտարալեզու օթյակերի գոյությունը: Այդ արգելքի վերացման պահից Վաշինգտոն լեգենդար քաղաքում (Washington DC) տարբեր էտնիկ օթյակներ են հայտվում: Այսպես է, որ ԱՄՆ տարբեր օթյակներում օծված բազմաթիվ եղբայրներ և ուրիշներ՝ օծված այլ երկրներում, հավաքվում են, որպեսզի 1994 թվականի Դեկտեմբերի 10-ին հիմնեն «Հայաստան» թիվ 94 Օթյակը, Կոլումբիա տարածաշրջանի Մեծ Օթյակի իրավասության տակ: Հիմնադրումից հետո «**Հայաստան**» **թիվ 94 Օթյակը մի նպատակ ուներ. հավաքագրել որքան հնարավոր է մեծ թվով եղբայրներ, մի վեհ նպատակով՝ օրերից մի օր Մասոնական Լույսը կարողանալ հասցնել Երևան, Հայաստան:**

1999 թվականի Դեկտեմբերի 16 –ին նույն Կոլումբիա շրջանի Մեծ Օթյակի հովանավորությամբ ծնվում է «**Մասիս**» **թիվ 99 Օթյակը:**

Առաքելությունն ընթացքի մեջ էր:.

21-րդ Դար. Հայաստանի Ազատ ու Ընդունված Որմնադիրների Մեծ Օթյակը:

«**Մասիս**» **թիվ 99 Օթյակը** ստեղծվել է որպես ուխտագնաց

Հայ Ազատ-Ոռմնադիր եղբայրների հանդիպումը Զվարթնոց տաճարում

օթյակ, որ, Ֆրանսիայի Ազգային Մեծ Օթյակի և Ռուսաստանի Մեծ Օթյակի օժանդակությամբ, պիտի իրագործեր **Հայաստանի Ազատ ու Ընդունված Որմնադիրների Մեծ Օթյակի** ստեղծման ծրագիրը: Այդ նպատակով 2001 թվականի Մայիսին տեղի է ունենում **«Աշխարհի Հայ Որմնադիրների Առաջին Համաժողովը»:** Այնտեղ ամփոփվեցին ու ի մի բերվեցին այդ մեծ քայլի վերջին հարցերը: Նշված համաժողովին ներկա էին եղբայր մասոններ ԱՄՆ-ից, Լիբանանից, Ռուսաստանից, Ֆրանսիայից, Միացյալ Թագավորությունից և Արգենտինայից:

Բուենոս Այրեսի տարածքում, այն պատմական համաժողովիից մի քանի ամիս առաջ, ծնվել է «**Ուրարտու» թիվ 442** օթյակը, Արգենտինայի Ազատ ու Ընդունված Որմնադիրների հովանավորության տակ: Որպես վերը նշված նույն քաղաքի «**Արարատ» թիվ 404** Օթյակից անջատված միավոր, «**Ուրարտու» թիվ 442** օթյակը ստեղծվում ու զարգանում է մի հիմնական, առաջնային նպատակով՝ տանել Որմնադրությունը հերմետիկ – ունիվերսալիստական ուղղությամբ և յուրաքանչյուր պահի սատարել սկիզբ առած ու զարգացող Կանոնակարգված Ֆրանկմասոնական շարժումը Հայաստանի Հանրապետությունում: Օթյակի առաջին Մեխառու Վարպետն էր Պատվելի Եղբայր Արա Չինիկյանը, նրան հաջորդում է Պատվելի Եղբայր Գաբրիել Ջոգուրցյանը - Արգենտինայի Ազատ ու Ընդունված Որմնադիրների Մեծ Օթյակի նախկին Մեծ Քարտուղարը[103]:

Այնպես ինչպես ստեղծվել էր «**Մասիս**» Օթյակը, Ֆրանսիայի Ազգային Մեծ Օթյակի հովանավորությամբ ստեղծվեց «**France-Armenie**» Օթյակը, և ռուսաստանի Մեծ Օթյակը, 2001 թվականի Դեկտեմբերի 4 –ին ստեղծում է «**Սեր» թիվ 18 օթյակը:** Դրանք

103. Պատվարժան Եղբայր Չինիկյանն առաջինն էր, որ նշանակում էր ստացել ներկայացնել և լինել Հայստանի Մեծ Օթյակի անդամ Հարավային Ամերիկայում: Պատվարժան Եղբայր Ջիոգուրցյանը եղել է Արգենտինայի Ֆրանկամսոնության պատմության մեջ ամենաերիտասարդ Մեծառու Վարպետներից մեկը: Ծանոթ. Հեղ.:

բոլորն էլ ստեղծվել են մի նպատակով՝ ողջ հայության համար Մեծ Օթյակի ստեղծման նպատակով:

Ահա այսպես է, որ պատմականորեն Հայաստանի Ազատ ու Ընդունված Որմնադիրների Մեծ Օթյակը հիմնադրվում է 2002 թվականի Հուլիսի 30 –ին, Երևան քաղաքում:

Տասնյակ տարիներ հետո, պատմության մեջ առաջին անգամ «Հայ Ազատ Որմնադրությունն» ունի իր ինքնավար Որմնադրական Իրավասությունը:

Ինչպես ասվում է Սահմանադրության մեջ, Հայստանի Մեծ Օթյակը գործում է կանոնավոր կարգով, հարգելով Կանոնավոր Ֆրանկմասնության հինավուրց ուղենիշները: Իր Սահմանադրությունը նպատակն է նաև մշակել Որմնադիրների ժողովները արարողակարգի 3 ձևերի համաձայն[104]: Էմուլիացիայի (Առջատարների հետ մրցելու ու նրանց հասնելու ձգտում: Ծանոթ. Թարգմ.) կարգը, Յորքի Ծիսակարգը և Շոտլանդական Հնամյա Ընդունված Ծիսակարգը: 2002 թվականին հաստատվեցին առաջին չորս հիմնադիր օթյակները. «**Մասիս» թիվ 1, «France – Armenie» թիվ 2, «Սեր» թիվ 3 և «Ջորջ Վաշինգտոն» թիվ 4:** Առաջին երեքը հովանավորվում են համապատասխանաբար հետևյալ օթյակների կողմից. Կոլումբիա Շրջանի Մեծ Օթյակ, Ֆրանսիայի Ազգային Մեծ Օթյակ և Ռուսաստանի Մեծ Օթյակ: **Առաջին գերագույն Մեծարգո Վարպետը եղել է Պատվարժան Եղբայր Քրիստափոր Սահակյանը, որին հաջորդել են Պատվարժան Եղբայրներ Արմեն Ջանյանը և Արմեն Կարապետյանը:** 2012 թվականի ընթացքում կտոնվի Հայաստանի Մեծ օթյակի հիմնադրման 10 -ամյակը, այժմ որպես նորընծա **Գերագույն Մեծարգո Վարպետ**

104. Մասոնական ժողովներն իրականացվում են հատուկ արարողակարգով ու ծեսերով, որ արդեն հարյուրավոր տարիներ է, ինչ աշխարհի տարբեր մասերում իրագործվում են նույն ձևով ու նույն ավանդույթով:

ունենալով **Պատվարժան Եղբայր Արմեն Սիմոնյանին:**

Մարդասիրական – հասարակական կտրվածքով, Հայաստանի Մեծ Օթյակը հիմնել է «**Նոյան Զավակներ**» **Բարեգործական Միությունը,** որի համար, տարին տարվա ետևից անընդհատ կազմակերպվում են բարեգործական բազմաթիվ միջոցառումներ, օգնելու համար ամենակրիքավորներին:

Դարձյալ Սփյուռքում, 2004 թվականին ծնունդ է առնում 2 նոր աշխատանոցներ. «**Արարատ**» **թիվ 848** Կալիֆորնիայում և «**Eaux de Sevan**» **(Սևանի Ջրեր) թիվ 1447՝** Վալենսում, Ֆրանսիայում:

«**Արարատ**» **թիվ 848** –ը ծնունդ է առնում 2004 թվականին Բալդուին պողոտայի և Սիեռա Մադրեի (Sierra Madre) խաչմերուկից ոչ հեռու, Կալիֆորնիայի Նահանգում: 2005 թվականին պաշտոնապես նրան հանձնվում է Նամակ - Արտոնագիրը, ստորագրված ու կնքված կալիֆորնիայի Մեծ Օթյակի Գերագույն Մեծարգո Վարպետ, Պատվարժան Եղբայր Հովարդ Քրքպատրիկի կողմից: «**Արարատ**» **թիվ 848** օթյակի եղբայրները ժողովները գումարում են յուրաքանչյուր ամսվա 3-րդ հինգշաբթի օրը:

Մյուս կողմից Վալենսի տարածքում, 2004 թվականի Մարտի 20 – ին օծվում է «**Eaux de Sevan**» **(Սևանի Ջրեր) թիվ 1447** օթյակը: Այս Օթյակը գործում է Յորքի արարողակարգով և իր տեղեկագրերում խիստ բանաստեղծական ոճով նկարագրում է «Սևանի Ջրեր» անունն ընտրելու խորհրդանշանային իմաստն ու այն որպես հոգևորության վահան ընտրելու պատճառը: Նշված երկու օթյակներն էլ խիստ պատասխանատու վերաբերմունք են ցուցադրում Հայաստանի Մեծ Օթյակի նկատմամբ:

«Արարատ» անունը կրող այդքան օթյակներից, որ եղել են հայկական որմնադրության պատմության մեջ, 2007 թվականին առաջին անգամ է, որ Երևանում է ծնվում «**Արարատ**» **թիվ 5 օթյակը,**

2007 թ. Հուլիսին, Հայաստանի Երիտասարդ Մեծ Օթյակի համար:

Սա առաջին հայախոս օթյակն է, որ ստեղծվել և զարգացվում է բացարձակապես միայն Հայաստանի Հանրապետությունում ծնված ու մեծացած հայերի կողմից:

2008 թ. Հուլիսին օծվում է **Հայաստանի համար 33-րդ աստիճանի Գերագույն խորհուրդը, որպես առաջին Ինքնիշխան Մեծ Հրամանատար ունենալով Գերիզոր Եղբայր Քրիստափոր Սահակյանին:**

Ինչպես Հայաստանի Ազատ Ու Ընդունված Մեծ Օթյակի հիմնումը, այնպես էլ 33-րդ աստիճանի Գերագույն Խորհրդինը, Հայստանի համար նշանակալից են և այն դարձնում են առաջատար ու **առաջին պետությունը Կովկասում որտեղ գոյություն ունեն այս մակարդակները**: Հայաստանի Գերագույն Խորհուրդը կազմված է, համապատասխանաբար՝ «Կատարելություն», «Գլուխ», (Capںtulo), «Արեոպագոս» (Aregpago), «Ղեկավար Խորհուրդ» (Consistorio) օթյակներից:

Կապված Հայստանի Մեծ Օթյակ մուտք գործել ցանկացողների մեծ թվին տեղական մակարդակով, 2010 թվականի Հոկտեմբերին Հայաստանի Մեծ Օթյակը պատրաստվում է բաց անել «**Երևան**» **թիվ 6** օթյակը: Արժե նշել, որ նույն Մեծ Օթյակը նաև ունի Ազատ Որմնադրության ուսումնասիրությունների աշխատանոց՝ «**Մեսրոպ Մաշտոց**» **Օթյակը:**

2010 թվականի Հունիսին, Բիբլիական Սուրբ լեռից շատ կիլոմետրեր հեռու, ծնվել է մի նոր օթյակ «**Արարատ**» **անունով, թիվ 4043,** որ պատկանում է Բրազիլիայի Սան Պաուլո շրջանի Մեծ Արևելքին, որպես առաջին Մեծառու Վարպետ ունենալով Եղբայր Զաքարիաս Մէբեկեանին: Այս Օթյակը խոստանում է վերականգնել ու նոր կյանք տալ Սան Պաուլոյի հայ համայնքին մասոնական այդ

մասոնական աշխատանոցի անդամ եղբայրների ջանքերի միջոցով: Միաժամանակ, Շվեցարիայում, պատմության մեջ առաջին անգամ այս երկրում, հայազգի մի խումբ եղբայրներ ստեղծում են «Մասոնական Եռանկյուն»[105]:

Ի վերջո, 2011 թվականի ընթացքում կազմվեցին հետևյալ ծրագրերը. Հուլիսին Վրաստանի Հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիում ստեղծվեց «**ოქროს საწმისი**» **(օքռօս սաածմիսի – Ոսկե Գեղմ) թիվ 7 Օթյակը**[106]**:** Բացի այդ, Երևանում դրել են երկու ապագա օթյակների հիմնաքարերը. «Հաջիկատար» **(Hagigadar)** հայա - ռումինախոս և «Լուսաբեր», հայա-արաբախոս: «Հաջիկատար» **(Hagigadar)** օթյակը ծագում է Սփյուռքում հիմնված վերջին օթյակից՝ «**Արարատ**» **թիվ 348**–ից, Բուխարեստի դաշտից, ռումինիա: Այս օթյակը հույս ունի հավաքագրել հայ եղբայրների ամբողջ Արևելյան Եվրոպայի տարացքից: Նրա անդամներից երկուսը մոլդովահայեր են ու բազմաթիվ թեկնածուներ **Բուլղարիայից**[107]**,** Հունաստանից, Սերբիայից ու Կիպրոսից: Հիմնադրվել է 2011 թվականի Հունվարի 16-ին և վերջապես Նամակ - Արտոնություն է ստացել նույն թվականի Ապրիլի 30 –ին: Հարկ է նշել, որ «Արարատ» թիվ 348 օթյակի անդամները մեծ հարգանք են տածում վերը նշված ռումինահայ մասոնական ավանդույթների հանդեպ[108] և մեծ

105. Մասոնական Եռանկյունը դա նվազագույնս 3 Վարպետների ժողովն է, ապագա նոր օթյակի սյուները դնելու նպատակով:

106. 19-րդ դարում Թբիլիսին հանդիսացել Կովկասի հայերի մտավոր, մշակութային և հասարակական կենտրոնը: Բնակչության կեսից ավելին հայեր էին: Ծանոթ. Հեղ.

107. Բուլղարիայի Վառնա քաղաքում գործում է մի օթյակ «Արարատ» թիվ 58 անունով, սակայն այն գտնվում է մի դեռևս չկանոնակարգված Մեծ օթյակի՝ Բուլղարիայի Ազատ, Հինավուրց և Ընդունված Ֆանկմասոնության իրավասության տակ: Նրա առաջին Մեծառու Վարպետը եղել է Գևորգ Գրիգորյանը, որն արդեն մի քանի տարի է, ջանում է ընդարձակել հայանդամ այս աշխատանոցը:

108. Ռումինահայերը իրենց բոլոր ուժերը ներդրել են Հայաստանի համար 33-րդ աստիճանի Գերագույն Խորհրդի ընդարձակման համար: 2012 թվականի ընթացքում «Արարատ» թիվ 348 օթյակն ու Ռումինիայի Հայ Առաքելական Եկեղեցին միասին կտոնեն Հաջիկատարի եկեղեցու 500 (հինգ հարյուր(տարին: ծանոթ. հեղ: Ռումինահայերի

ցանկություն ունեն մասոնական լույսը հայոց հողերը հասցնելու:

Հայոց Գերագույն Օթյակը շարունակում է անդադար զարգացնել իր ճամբան: Ժիլբերտ Ստեփանյանի, Կարեն Հակոբյանի և ներկայումս Դավիթ Հակոբյանի նախագահությունները շարունակել են հիմնադիրների կատարած աշխատանքը: Ավելի քան տասնմեկ աշխատող օթյակներ և քսան տարվա անխափան աշխատանք:

Մտավոր Մասոնականության 300 - ամյակից հայ մասոնականությունը կարողացել է իրականացնել իր վերապրելու և, անկախ քաղաքական կամ մշակութային արգելքներից, անխոնջ աշխատելու առաքելությունը:

Հայ Մասոնները միշտ էլ ջանք չեն խնայել ընդարձակելու համար այս Համընդհանուր Եղբայրությունը:

Երբ «France Armenie» թիվ 2 օթյակի եղբայր մասոնները հավաքվում են, իրենց աշխատանքը սկսելուց առաջ և ավարտելուց հետո երգում են արդեն հիշատակված, 19-րդ դարի բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանի բանաստեղծության հիման վրա գրված երգը.

«Ընդ աստեղոք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն»

(*) Արգենտինայի Մեծ Օթյակի Իրավասության տակ գործող «Ուրարտու» թիվ 442 օթյակի պատվավոր անդամ և AD VITAM Մեծառու Վարպետ;

Հայաստանի Մեծ Օթյակի Իրավասության տակ գործող «Մասիս» թիվ 1 օթյակի անդամ;

Մեծառու Վարպետի օգնական և Հարավային Ամերիկայի և

մասոնական հարուստ ավանդույթներ ունեն: Տես. Ֆաբիան Անտոն, ամբողջությամբ:

Միջամերիկյան Մասոնական Համադաշնակցության Մեծ Տեսուչ Հայաստանի Մեծ Օթյակի համար:

Իրավաբան. Բուենոս Այրեսի Համալսարան;